


76557

323

9-42

1916



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ս. Տ. Մ-ԵԱՆԻ.

Հ Ա Յ Ե Ր Ի

47

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԶԱՐԺՈՒՄՆԵՐԸ

XX դարում

Կ ա մ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ

Գ Ր Ե Գ

ԵՂԻՇԷ ա. քահ. ԳԵՂԱՄԵԱՆՑ



Протоіерей Егишэ Гегамянцъ Освободительное  
движеніе армянъ въ XX стол.

Перепеч. изъ журнала „Овигъ“



ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

3237  
17-12-16

Баку.

Типографія «Труженикъ» А. Л. Куинджы.

1916.

15 JAN 2010  
26 SEP 2006

523.1  
Գ-42

56

ՀԱՅԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XX-ՐԴ  
ԴԱՐՈՒՄ

(Հայկական հարցի եօթներորդ շրջանը)

29559

Ա.

Թիւրքիայի և Իտալիայի մէջ 1911 թուականի պատերազմը տակաւին չէր վերջացել և Բալկանի փոքր ազգերի դաշնակցութիւնը ընդդէմ Թիւրքիայի՝ տակաւին պաշտօնապէս չէր հրատարակւել և նախ Սև-Լեռնցիք (Չերնոզորիացիք) և ապա հետզհետէ միւսները տակաւին նոր էին սկսել իրենց եղջիւրները՝ ցոյց տալ Թիւրքիային, — և ահա 1912 թ. օգոստոսի 21-ին Պետրոգրադի հեռագրական գործակալութիւնը հետեւալ հեռագիրը բաց թողեց՝ «Յուզիչ յարեք են ստացուած Բիւրդստանից: Վանի վիլայէթում քիւրդերը շարունակ յարձակումներ են գործում հայ գիւղերի վրայ: Մի գիւղ հրդեհուած է, ուրիշ երկուսի մէջ 14 հայեր են սպանուած: Բազմաթիւ վիրաւորներ կան. փախցրել են 8 կին»<sup>1)</sup>:

Բ.

«Յուզիչ յարերը» ամենուրեք հայ ժողովրդի

1) «Մշակ» 1912 № 185.

ականջին հասցնելու նպատակաւ երևի՝ երկու հայ քահանաներես իրապարակ նետուեցան: Մէկը՝ Մոսկուայի էմմանուէլ քահանայ Նազարեանցն էր, որ հետեւեալ հեռագիրն է ուղղել «Մշակ»-ին՝ <sup>1)</sup> «այստեղ լուր է ստացուած, որ Վանի վիլայէթում հայերի ջարդ է տեղի ունեցել: Սպանուած է 54 հոգի: Հրդեհուած է 3 գիւղ» <sup>2)</sup>:

Իւր այս «յուզիյ» հեռագրից երեք օր յետոյ, — օգոստոսի 23-ին, — Նազարեանց քահանան՝ հետեւեալ հեռագիրն էս ուղարկեց «Մշակ»-ին՝ <sup>3)</sup> «Վանի շիջանի կոտորածի առիթով Կ. Պօլսի հայերը սևադրուս եւ ցոյցեր սարկել: Հայոց պատրիարքը յայտարարել է Բ. Դրանը որ կը ներկայացնէ իւր հրաժարականը, եթէ հայերի ջարդը չդադարին»:

Կ. Պօլսի հայերի օգոստոսի 24-ին ունեցած սևադրութիւնը, 5—6 օրուայ ընթացքում, ինչպէս երևում է, արդէն յուզմունքի էր փոխարկուել, վասն զի հ. Նազարեանց օգոստոսի 30-ին հետեւեալ հեռագիրն էլ էր տուել՝ «Կ. Պօլ-

1) 1912 № 185.

2) Հեռագրական գործակալութեան հեռագրով սպանուած 14 հոգին՝ Նազարեանց քահանայի հեռագրում դարձել են՝ 54 հոգի: Եւ հրդեհուած մէկ գիւղը՝ դարձել է երեք գիւղ. — Արդեօք դրանցից մըն է սխալը, կամ սուտը:

3) «Մշակ» 1912 № 187.

սի հայերը սասիկ յուզուած եւ: Վանում քանդուել են (արդէն) բոլոր գիւղերը <sup>1)</sup>:

Մոսկուայի իւր պաշտօնակցի օրինակին հետևում էր Պետրոգրադի քահանայ հ. Գրիգորեանցը, որ իւր ունեցած կամ ստացած այս «յուզիյ» լուրերը տարածում էր «Новое Время» թերթի միջոցաւ:

Գ.

«Մշակ»-ի Կ. Պօլսի թղթակից Շառայի հաղորդածածից երևում է, որ, արգարև, այստեղ հայերը մի ցոյց արել են: «Մայրաքաղաքի թաղերէն հաւաքուած խումն բազմութիւն մը, — գրում է Շառայ, — մեծ մասամբ գաւառացիներէ բաղկացած, ժողովրդային յուզման խաղաղ ցոյց մը ըրին <sup>2)</sup>, և կը յուսացուի, որ իւր ազդեցութիւնը պիտի ունենայ ապահովաբար Օսմանեան կառավարութեան վրայ»:

Այս ցոյցի ժամանակ՝ Վասպուրականցի հայերը և Օսմանեան համալսարանի ու երկրագործական ուսումնարանի հայ ուսանողները համախօսականներ ներկայացրին Ազգային ժողո-

1) «Մշակ» 1912 № 192.

2) Մեր ընթերցողները, երևի, յիշում են, որ Հ. Պօլսի հայերը «Հնչակեան» կուսակցութեան ղեկավարութեամբ մի այդպիսի «խաղաղ ցոյց» 1895 թուին արին, որ մի քանի տասնեակ հազար հայերի կեանքով վերջացաւ:

վին, պահանջելով որ «ազգային ժողովն ու վարչութիւնը հրաժարուեն, փակուեն եկեղեցիները, դպրոցները, բոլոր ազգային պաշտօնական հաստատութիւնները. ինչպէս եւ պատրիարքարանը»<sup>1)</sup>։

Երեւի Կ. Պօլսի հայերի այս «խախաղ ժողովրդային ցոյցը» Օսմանեան կոռուպարութեան վրայ ցանկալի ազդեցութիւն չգործեց, — ուստի և հայ քաղաքագիտութիւնը վճռեց արտախուս, Օսմանեան երկրից դուրս գնուած հայերի միջոցաւ ազդել թիւրքիայի վրայ։

Վասն որոյ «Մշակ»-ը սկսեց տարածել թէ՛ «Թիֆլիսում շարունակուում են ստացուել յուզիչ լուրեր Վանի շրջակայքի թիւրքահայերի վրտանգաւոր վիճակի մասին։ Գիւրգական հրոսակախմբերը սանձարձակ ոպառնում են կոտորած։ Պօլսից հեռագրում են թերթերին, որ Հայոց Պատրիարքի հետ խօսակցելիս՝ թիւրքաց ներքին գործերի մինիստրը յայտնել է, թէ հայկական ջարդերի պատճառ հանդիսանում է հողային հարցը»։

Դ.

Այս ամեն տեղեկութիւնների վրայ հիմնուելով Հ. Առաքելեանցը՝ «Բագրևաշարչար Հայաստան» առաջնորդողի մէջ հարկաւոր համարեց կրկնել և երեքկնել թէ՛ «վերջին հեռագիրները,

1) «Մշակ» 1912 № 196.

լրագրական տեղեկութիւնները հաղորդեցին որ ջարդերը, աւերումները թիւրքաց Հայաստանում վերսկսել են։ Նորից զինուած քիւրդերը հրապարակ են եկել՝ մահ և սարսափ տարածելով անդէն հայ ժողովրդի մէջ։ Տեղական իշխանութիւնները ոչ միայն ոչ մի կտրուկ միջոցի չեն ձեռնարկում ոճրագործներին պատժելու, այլ և կենդրոնական իշխանութիւնը Պօլսում, որին դիմում է Հայոց պատրիարքը բողոքներով և պահանջներով՝ վերջ տալ անմիջապէս կոտորածներին, նոյնպէս անտարբեր ընթացք է բռնում կամ պատասխանելով թէ լուրերը չափազանցեցրած են և կամ անորոշ խոստումներ՝ «գործադրել օրէնքի տրամադրութիւնը և պատժել յանցագործներին»<sup>1)</sup>։

Ե.

Մի քանի օրից յետոյ՝ Պետրոգրադի հեռագրական գործակալութեան և Նազարեանց քահանայի հեռագիրներից 1) տեղեկանալով Կ. Պօլսի պատրիարքի և ազգային վարչութեան հրաժարուիլը՝ «Մշակ»-ը 2) մի նոր առաջնորդող գրեց «Հայոց իւրցի վերաբացումը» վերնագրով, որի մէջ ասում է՝ «ուրեմն թիւրքահայաստանը նո-

1) «Մշակ» 1912 № 195.  
2) «Նոյնը» № 195.  
3) Նոյնը № 200.

րից ենթակայ է այն արհաւիրքներին, սասանութիւններին, որոնք ստիպեցին 1878 թուում ուսահայերի <sup>1)</sup> ղեկավարութեամբ Գր. Արծրունու ժողովրդական (?!) պետիցիա ներկայացնել ուսաց Ազատարար Կայսր Աղէքսանդն II-ին»:

— «Դրա համար էլ,—շարունակում է Համբ. Առաքելեանը,—այժմ պէտք է հայ ժողովուրդը ոյժ և թիկունք տայ իր ներկայացուցիչներին բողոքին, լսելի անելով և իր բողոքի ձայները»:  
Կ. Պօլսոյ մեր թղթակցի մի նամակից, որ տըպուում է այսօր, երևում է, որ ամենայն Հայոց կաթողիկոսի մի հեռագիրը, ուղղուած պատրիարքին, որով տեղեկութիւններ է խնդրում հայերի դրութեան մասին թիւրքիայում, շատ նպաստաւոր և խրախուսիչ տպաւորութիւն է թողել: Եւ ոչ միայն հայոց եկեղեցու պետը պէտք է իր ձայնը բարձրացնէ իր հօտի պաշտպանութեան համար, այլ և ուսահայերը, հնդկահայերը, եւրոպական հայերը իրենց պատշաճաւոր կառավարութիւնների ուշադրութիւնը պէտք է հրաւիրեն թիւրքիայի իրենց եղբայրների անտանելի վիճակի վրայ յանուն մարդասիրութեան, յանուն քրիստոնէական զգացման և յանուն արդարութեան: Հասել է բոլորին, որ քաղաքակիրթ աշխարհը և մանաւանդ Ռուսաստանը իր ձեռք առնէ վեհ և ազատարար Աղէքսանդր II Կայսր ծրագիրը թիւրքիայի ազատագրութեանը համար

<sup>1)</sup> (Ճիշտը՝ մի փոքրիկ խմբակ թիֆլիզեցիներին:

իրագործելով Ս. Ստեփանօսի դաշնագրի 16-րդ յօդուածը»:

Միևնոյն այս քարոզը ուսահայերին կարգում էր նա և «Մշակ»-ի թղթակիցը՝ Շառայլ գրելով թէ՛ «ժամն է բողոքելու, ժամն է լալու և աղմուկ հանելու»:

2.

Շառայլին ձայնակցեց «Հորիզոն»-ի աշխատակից Ա. Աբեղեանը, պահանջելով, որ միահամուռ և միաձայն աղաղակեն բոլոր ուսահայ ընկերութիւնները <sup>1)</sup>:

Գալով թերթի իրան՝ նա ձայն բարձրացնելն, աղմուկ հանելն բաւական չէր համարում, այլ առաջարկում էր նաև՝ ինքնապաշտպանութեան դիմել անմիջապէս:

«Հորիզոն»-ը գրում էր՝ «Միակ ելքը զէնքի դիմել է» <sup>2)</sup>: «Ամենից առաջ ինքնապաշտպանութեան զարկ տալ» <sup>3)</sup> «Լսելը յանցանք է» <sup>4)</sup>: Տաճկահայերի սպառնալից դրութիւնը և ինքնապաշտպանութեան կարիքը» <sup>5)</sup>:

«Որքան էլ ինքնապաշտպանութեան գործը,

1) «Հորիզոն» 1912 № 206.

2) «Նոյնը» № 208. առաջնորդողը.

3) Նոյնը № 249. դարձեալ.

4) Նոյնը № 197. դարձեալ.

5) Նոյնը № 188. դարձեալ.

— գրում է թերթը «Կոտորածների մղձաւանջը» առաջնորդողում, — ներկայ վայրկեանի ամենակարևորը և ամենից հրամայականը լինի՝ նա չպէտք է արգելք հանդիսանայ որ հայկական արիւնոտ հարցը մի անգամ ևս հրապարակի վրայ դրուի և այս անգամ հաստատ վճռականութեամբ կամ մեռնել եւ վերջնականապէս սևեռեսաւեղ աշխարհիս երեսից <sup>1)</sup>, կամ այդ հարցը բաւարար լուծման բերել» <sup>2)</sup>։

Ապա «Հորիզոն»-ը բացատրում է ինքնապաշտպանութեան եղանակը», ասելով՝ «ինքնապաշտպանութիւն կազմակերպել՝ նշանակում է դրամ հայրաքել, զենք հասցնել Տաճկաստան, այնչեղ համապատասխան կազմակերպութիւններ առաջ բերել, ի հարկին նոս և կուրծք տալ վայրենի խուժանի գրոհին» <sup>3)</sup>։

Միջանկեալ ես պէտք է յտանեմ իմ ընթերցողներին, որ «Հորիզոն»-ի այս ցանկութիւնը շատ շուտով գլուխ եկաւ, վասն զի արդէն «Վասնի շրջակայքում ևրևան են եկել զինուած հայկական խմբեր» <sup>4)</sup>։

Ինքնապաշտպանութեան մտքին դառնալով ես պէտք է ընթերցողներին այս էլ յայտնեմ,

<sup>1)</sup> «Հորիզոն» № 201.

<sup>2)</sup> Ընդձուցները միշտ իմն են.

<sup>3)</sup> «Հորիզոն» № 196: Տես նաև № № 198, 202,

207 ախաջնորդողները,

<sup>4)</sup> Նոյնը № 249.

որ այդ մտքի հակառակորդներին «Հորիզոն»-ը անկարելի էր համարում՝ «հայ հասարակութեան անդամ համարել. դրանք այլասեռուած երևոյթներ են, որ մեր ազգային մթնոլորտի առողջացման հետ միասին կանհետանան մեր կեանքից»: «Հորիզոնի» նման էջմիածնի «Արարատը» ևս պահանջում էր «զինաւորում», և կամ «Մշակի» նման՝ արտաքին, ներգործական միջամտութիւն» (1912 № 9 եր. 797):

է.

Սեպտեմբերի 11-ին Նազարեանց քահանան հեռագրում էր «Մշակ»-ին թէ՛ «Իրարբէքերի, Բիթլիսի և Մուշի թեմակալ առաջնորդները հեռագրում են տեղի ունեցող զազանութիւնների մասին, (սւմ. Նազարեանցին միթէ):

Սպասւում է «հայկական մասսայական կոտորած» <sup>1)</sup>: Միևնոյն այս լուրը, և աւելի ընդարձակօրէն, հաղորդում էր և «Новое Время»-ն, աւելացնելով թէ՛ «մեծ կոտորածների նախօրեկի առաջ ենք կանգնած»։

Այս «զազանութիւնների» և սպասուած «մասսայական կոտորածների» առաջն առնելու դիտաւորութեամբ՝ Թիֆլիզի հայ քաղաքագէտները՝ Համբ. Առաքելեանի ղեկավարութեամբ՝ որոշեցին Վրաստանի նախկին մայրաքաղաքում.

<sup>1)</sup> Նոյնը № 249.

բողոքի միտախնդ կազմել, սակայն «Կովկասեան բարձր իշխանութիւնը աւելի յարմար է զըտնում, որպէսզի ամենայն Հայոց կաթողիկոսը դիմէ Պետրոզբաղ համապատասխան միջնորդութեամբ՝ օգնութեան մասին»<sup>1)</sup>։

Եւ ահա՛ ի կատարումն Կովկասեան բարձր իշխանութեան այս առաջարկութեան՝ սեպտեմբերի 19-ին կայացած Թիֆլիզի հայոց «առաջնորդարանի խորհրդակցական ժողովը»<sup>2)</sup> Սամսոն Յարութիւնեանցին և Համբարձում Առաքելեանցին ընտրում է պատգամաւոր Էջմիածին գնալու և Վեհափառ կաթողիկոսին խնդրելու, որ դիմէ ռուսաց կառավարութեան օգնութեանը։

է.

Պատգամաւոր Սամսոն Յարութիւնեանց և Համբարձում Առաքելեանց Վեհափառին ներկայացան հետևեալ թղթով.

«Վահափառ տէր,

Թիֆլիզի հայ հասարակութեան անձանց մի խումբ, բաղկացած Թիֆլիզի Հայոց Լուսաւորական, Բարեգործական հաստատութիւնների, մամուլի և հասարակութեան զանազան խաւերի ներկայացուցիչներից, քննելով Թիւրքիայի հայե-

1) Մշակ. № 208.

2) Նոյնը.

րի դրութիւնը, որ դարձել է անտանելի, շնորհիւ անընդհատ բռնութիւնների նրանց կեանքի, պատուի և գոյքի դէմ և շտեմներով ձեռք առնուած իրական միջոցներ ու առհաւատչեայ թիւրքաց իշխանութիւնների կողմից՝ այդ երևոյթները խափանելու համար, չկարողանալով այլևս անկարեկցաբար լսել մեր եղբայրների դէմ գործուող այդ զազանութիւնների մասին, — դիմում ենք Ձեր վեհափառութեան, իբրև հոգևոր պիտի հայ ժողովրդի՝ թէ՛ Ռուսաստանի և թէ՛ Թիւրքիայի, ինչպէս և բոլոր հայերի, և թախանձագին խնդրում՝ դիմել Թագաւոր Կայսրին միջնորդութեամբ՝ պաշտպանել Թիւրքիայի հայ ժողովուրդը՝ անդրազոյն տանջանքներից և իրաւագրկումից։ Մենք հաստատապէս հաւատում ենք, որ իբրև աւանդական հովանաւոր քրիստոնեաների արևելքում, նոյնպէս և իբրև մի մեծ պետութիւն, որ ստանձնել է Բերլինի դաշնագրի հիման վրայ հոգս՝ մտցնել անհրաժեշտ ըէֆօրմներ Թիւրքիայի հայաբնակ վիլայէթներում, ռուսական մեծ պետութիւնը անուշաղիբ չի թողնի Ձեր Վեհափառութեան և ի դէմս Ձեր հօտի, Ձեր հարազատ զաւակների կողմից արուած խնդրանքը, և իբր հօրը հովանաւորութեամբ և միջամտութեամբ վերջ կը դնի մեր եղբայրակիցների տանջանքներին, որով մի անգամ ևս հանուր աշխարհի առաջ ցոյց կը տայ իր վեհ և պատմական միասիան մերձաւոր Արևելքում»<sup>1)</sup>։

1) «Մշակ» № 211.

Ը.

Վեհափառ կաթողիկոսի պատասխանը և նրա արած տնօրէնութիւնը լսելուց առաջ՝ ընթերցողին անհրաժեշտ է ստուգել թէ՛ կոտորածների, աւերածումների, մասսայական ջարդերի և սպանութիւնների առթիւ՝ «Մշակ»-ի և նրա թղթակից ու աշխատակիցների, «Հորիզոն»-ի և նրա թղթակիցների ու աշխատակիցների, Պետրոգրադի հեռագրական գործակալութեան. «Новое Время» և հայերի համար *ursaguar* միւս ոռւս թերթերի թեմբեկահարութիւնները ճիշտ էին արդեօք և ո՞ր աստիճան:

«Հովիտ» շաբաթաթերթի պատասխանը այս հարցին միանգամայն բացասական էր:

Կ. Պօլսոյ ազգային ժողովում երեսփոխան Վարդգէս էֆէնդի (որ «Հորիզոն»-ի բանակի յայտնի գործիչ է Օսմանեան մայրաքաղաքում), իր ճառի մէջ շեշտում է, որ «գոհերի թիւը 15 կամ 20 հազիւ լինի<sup>1)</sup>»:

«Հորիզոն»-ը ինքը ևս հակուած է Վարդգէս էֆէնդիի կողմը՝ վասնզի թերթը քաջ գիտէ, որ «ընդհանրապէս թերահաւատութեամբ» պէտք է վերաբերուել հեռագրական գործակալութեան, ինչպէս և նաև ոռւս թերթերից շատերի այն

1) «Հորիզոն» № 205.

հաղորդագրութիւններին, որոնք խօսում են Տաճկաստանի մասին»<sup>1)</sup>:

Բայց մէջտեղում մի այլ վկայութիւն կայ, որ բարձր է, քան բոլոր հայ և ոռւս թերթերի ու նրանց աշխատակիցների ու թղթակիցների խմբագրականներն ու հաղորդագրութիւնները:

Այդ հեղինակաւոր վկայութիւնը Կ. Պօլսոյ ոռւսական դեսպան Գիրսինն է, որ թերթերի թմբեկահարութիւններից նոյնիսկ երեք ամիս յետոյ, այն է՝ դեկտեմբերի 14-ին՝ արտաքին գործերի մինիստրին գրում էր թէ՛ «մօտ ապագայում հայերի մասսայական ջարդ չէ սպասւում»<sup>2)</sup>:

Թ.

Ռուսաց դեսպանի վկայութիւնը՝ նրանից մի ամիս առաջ, այն է նոյեմբերի սկզբներին՝ հաստատում էր նոյն ինքն «Հորիզոն»-ը գրելով<sup>3)</sup> «ճիշտ այն միջոցին, երբ պատերազմը տակն ու վրայ է արել ամբողջ երկիրը (Տաճկաստանը), և կրքերը, կրօնական և ազգային, բորբոքած են, — ճիշտ այդ ժամանակ, ասում ենք, հայկա-

1) «Հորիզոն» № 246.

2) «В ближайшем будущем массовых избитий армян не предвидится». (Реформы в Армянии. № 7).

3) «Հորիզոն» № 247.

կան գաւառներից եկող լուրերը աւելի «հան-  
գատացուցիչ են, և աւելի խաղաղ»: Էրզրուածի մէջ,  
թէ քաղաքի և թէ գիւղերի մէջ, «հանգատու-  
թիւնն աւելի է, քան առաջ: Նոյն տեսակ լու-  
րեր են ստացուած Մուշի և Բիթլիսի շրջաննե-  
րից»:

Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, — աւելաց-  
նենք, ընթերցող, «Հորիզոն»-ի այս տողերի վը-  
րայ: Վասն զի Օսմանեան կառավարութիւնը ինչ է  
այնքան էլ ապուշ չէր, որ մինչդեռ նրա կրո-  
պական մասերը «տակն ու վրայ էին» եղել,  
թոյլ տար, որ ասիական մասերում ևս խլրտու-  
ներ և ընդհարումներ առաջ գան և այդ մասն  
ևս տակն ու վրայ շինեն: — Եւ եթէ վերջերում  
քրդերի կողմից յարձակումներ գործուեցան հայ-  
երի վրայ, — դրանում մեղաւորը՝ Օսմանեան կա-  
ռավարութիւնը չէր, որ իսկոյն միջոցներ ձեռք  
առաւ քրդերին զսպելու՝ խռովարարներին և ոճ-  
րագործներին բռնելով ու գլխատելով, թէպէտ  
և նրանցից մէկ երկուսը յաջողեցան, «կրոպա-  
կան պետութիւններից մէկի՝ հիւպատոսարանին  
ապաւինելով» իրենց կեանքը փրկել:

Դառնանք էջմիածնին:

ժ

Վեհափառ կաթողիկոսը պատասխանելով  
պատգամաւորներին՝ ծանուցել էր որ ինքն ար-  
դէն իր կողմից հարկաւոր տեղեկութիւններ պա-

հանջել է Կ. Պօլսոյ պատրիարքից տաճկահայաս-  
տանում տեղի ունեցած անցուղարձի մասին:  
Միևնոյն ժամանակ Վեհափառը յանձն էր առել  
ուսաց կառավարութեանը դիմելով՝ նրա օգնու-  
թիւնը հայցել տաճկահայ ժողովրդի համար:

Որպէսզի Վեհափառի դիմումը հիմնուած  
չլինի լոկ Թիֆլիզի Հայոց Առաջնորդարանում  
ժողոված սակաւաթիւ անձանց միջնորդութեան  
վրայ, այլ բոլոր ուսասհայ ժողովրդի միջնոր-  
դութեան վրայ, Համբ. Առաքելեանը էջմիածնից  
վերադառնալիս՝ «Ի՞նչ պէտք է անենք ուսաս-  
հայերս» վերնագրով մի առաջնորդող գրեց,  
որով հրաւիրում էր «որ մուսաստանի միւս հա-  
յաքնակ քաղաքների հայ հասարակութիւնները  
ևս իրենց դիմումներով՝ նման Թիֆլիզի ինտելի-  
գենցիայի դիմումին՝ խնդրեն Հայրապետի ու-  
շաղբութիւնը թիւրքահայոց աղէտալի վիճակի  
վրայ» 1):

Միևնոյն քարոզը կարգաց նաև «Հորիզոն»-ը  
վերևում յիշուած խմբագրականներում:

Եւ երկու հայ օրաթերթերի այս հրաւերը՝  
ձեռաց արձագանք գտաւ Բագում, Երևանում,  
Ալէքսանդրօպօլում և այլն:

Այնուհետև Նորին Վեհափառութիւնը դիմեց  
ուսաց կառավարութեանը սահմանուած կար-  
գով:

1) «Մշակ» 1912 № 211.

Այս դիմումը, ըստ «Մշակ»-ի « մի խոշոր պատմական իրողութիւն է»: Ուստի թերթը «Հայկական հարցը» վերնագրով մի շարք առաջնորդողներով՝ գրուագեց այդ դիմումը <sup>1)</sup>:

ՓԱ.

Վեհափառ կաթողիկոսի դիմումը կառավարութեանը՝ կուռան դարձաւ ուսական դիպլոմատիայի համար՝ ի պաշտօնէ հայկական հարցը յարուցանել Օսմանեան և եւրոպական տէրութիւնների առաջ: Եւ այսպիսով ահա այդ շարադէտ հարցը նորից քաղաքական հորիզոնի վրայ երևեցաւ՝ արդէն իր եօթներորդ շրջանում:

Առաջ քան թէ հայկական հարցի այս շրջանի առթիւ՝ քաղաքագիտական երևոյթները պարզաբանելը, կարծեմ, աւելորդ չի լինիլ տեսնել թէ նորին Վեհափառութեան Ռուս կառավարութեան դիմումը ինչ տպաւորութիւն գործեց Կ. Պօլսոյ թիւրքերի վրայ:

Թիւրքերի այդ տպաւորութիւնը դուրս է բերել «Մշակ»-ի թղթակից Շատայլը <sup>1)</sup>: «Ամենայն Հայոց կաթողիկոսի դիմում ընեին և օգութիւն հայցեին Ռուսիոյ միջամտութեանը՝ հրաւիրելու փորձ է: Որովհետեւ եւրոպական դիւա-

1) «Մշակ» № 249, 250 և հետեւաները:

1) «Մշակ» № 209.

նագիտութիւնը Րուսելիի ազդութեանց վիճակին դարձան տանել և կարգ մը առանձնաշնորհումներ տալու թելադրութիւն կրնէ, դուք ալ, — կըսեն թիւրքերը, — առիթէն օգուտ քաղելու համար՝ աղմուկ կը հանէք, առանձնաշնորհումներ ստանալու համար»:

Թիւրքերի այս մի քանի պարբերութիւնից՝ Շատայլ հետեացնում է թէ՛ «այս զաղափարը կրնայ մեզի համար աղէտաբեր հետեանքներ ունենալ, վտանգի ասիկա կը նշանակէ թէ անոնք (թիւրքերը) հիմա առկայ կը ճատացնելով է, որ կուենկրնդրեն հայոց բողոքները, և եթէ երբէք օր մը հասնին այն վիճակին, որ մեզի հետ մեծ նակ միան, գուցէ չարաչար «վրէժ լուծեն իրենց նեզ օրերուն մէջ՝ անհանգիստ ըրած ըլնայնուս համար»:

«Այս պայմաններուն մէջ, — շարունակում է պ. Շատայլը, — ազգային ժողովը վտանգաւոր խաղ մը կը խաղայ: և երբէք ներելի չէ, որ անգոյ ուժերի վրայ հիմնուած պոռոտախօսութիւններ ըլլան: Ընդհակառակը կը տեսնուի թէ՛ մեր երեսփոխանները՝ անտրամաբան ամբօխին ծափերուն գոհհիկ մուրացկանները, շատ անգամ կընեն այնպիսի յայտարարութիւններ, գորսխուժանավարները պիտի վարանէին ընել:

Օրինակի համար, — շարունակում էր Շատայլը, — երևակայեցէք աւելի քան եօթանասուն տարիներու բեռն ուսերուն վրայ կրող Հմայեակ

6559  
1006

եպ. Դիմաքսեան, որ առնուազն 40 տարիներու ալ ազգային կեանքի փորձառութիւն ունեցած է, երկու անգամ է, որ իրարու վրայ, առանց կշռելու իր խօսքերուն հետեանքը, կը յայտարարէ թէ հայերը պէտք է պահանջեն 61-րդ յօդուածի գործադրութիւնը: Միայն այս ծերունի եպիսկոպոսը, երբ այս խանդավառ խօսքերը կըսէ, չըսէր, թէ արդեօք միայն պահանջելը բաւական է, և թէ մեր այս պահանջը իրագործելու համար՝ ինչ միջոցներ ունինք: Արդեօք կը մոռնայ Հմայեակ եպիսկոպոսը 1878-էն մինչև 1908 թիւը ազգին կատարեալ նահատակութիւնը այդ չարագէտ 61-րդ յօդուածին գործադրութիւնը պահանջելու համար»:

«Ասիկայ սղորմելի խուժանավարութիւն մընէ, որ բնաւ ներելի չէ Հմայեակ եպիսկոպոսի պէս սպիտակահեր ու փորձառու եկեղեցականի մը համար, որ, իրաւ է, կը խանդավառ ժողովուրդը, սակայն կրակի հետ խաղալու կը մղէ զայն, օգտուելով իր անպատասխանատու հանգամանքէն, մինչ մենք զիտենք, թէ երբ գործը իր սեպհական կաշիին վրայ է, որքան զգոյշ է և շրջահայեաց» <sup>1)</sup>:

<sup>1)</sup> Բայց մթթէ Շառայլ և նմանները մի մի դիմաքսեաններ չեն արդեօք, որ միմիայն «ժողովուրդը խանդավառելով՝ նրան կրակի հետ խաղալու կը մղեն», Չէ որ գոյն այդ Շառայլն էր, որ Արշարունի պատրիարքին խանդավառում էր աղաղակելով թէ՛ «ժամը հասած

ժԲ.

«Մշակ»-ի Պոլսոյ թղթակիցը զժգոհ է ոչ միայն Հմայեակ եպիսկոպոսից, այլ նաև Ազգային ժողովի երեսփոխան Պարզև Փափագեանից, որ ահա «երկու անգամ է, որ արտառոց գաղափարներ կը յայտնէ» իր կոկորդին բոլոր ուժովը սպառնալով թէ՛ «եթէ պատրիարքը կը հրաժարի, ազգային ժողովը կայ և եթէ ան ալ անկարող ըլլայ բան մը ընելու, ժողովուրդը կայ»:

«Պ. Պարզև Փափագեանը,— շարունակում է Շառայլը,— ուրեմն ժողովուրդը ասպատամբութեան կը հրաւիրէ:

«Ասիկա պարզապէս պոռոտախօսութիւն մըն է և անտեղի, վասնզի անդէն ժողովուրդը մը ասպատամբութեան չգրգռելն աւելի մեծ առաքինութիւն մըն է: Դժբաղդաբար այս նըբու-

---

կը համարենք, որ Արշարունի պատրիարքը անձնազոհութեան և անձնանուիրութեան գերագոյն օրինակը ինքը տալով՝ Ներսէս պատրիարքի և Խրիմեանի հանգոյն՝ ինքն իր մէջ մարմնացնէ հայութեան ցաւը, և իր ձեռնարկին բովանդակ զիտակցութեամբը և «միայն իր անձնական պատասխանատուութեան տակ՝ խտախտացնէ իր ձայնը, բողոքողի դիրք բռնէ. չվարանի նոյն իսկ օտար կառավարութեանց գիմելու սպառնալ՝ Հայոց ողբալի կացութեան վերաբերմամբ» («Մշակ», № 188):

Թիւն որը նկատի առնող մարդիկ չկան Ազգային Ժ. դովին մէջ: Ընդհակառակը մեր երեսփոխաններէն շատերը ազգին սրտին այսքան մօտիկ ցաւի մը վրայ խօսելու համար ամեն ջանք ու ճիգ կը թափեն: Ունկնդիր ժողովուրդը, յաճախ առանց հասկընալու նշանակութիւնը և իմաստը, կը ծափահարէ զիրենք և ասիկայ արդէն իրենց լաւագոյն վարձքն է: Հակառակ առջորդ, որ գործին փափկութիւնը ժողովին դռնփակ բլլալը կը պահանջէր, այս խուժանավարները կուզեն, որ ստոնք հրապարակաւ կատարուին:

«Բարձրագոյն Դուռը անշուշտ կը հետեւի այս ամենուն, և շատ «կասկածելի է, որ կարենայ մարտել» այս հակակառավարական յայտարարութիւնները»<sup>1)</sup>:

Այսքան մանրամասնաբար կանգ առնելով հայ Երկրի և նրանց աշխատակիցների ու թղթիկների գրածների վրայ, կանգ առնելով նաև Թիֆլիզից և միւս քաղաքներից էջմիածին գնացած պատգամաւորների վրայ, ուստի կառավարութեանը եղած դիմումների վրայ, Ազգային ժողովի գործունէութեան վրայ, — ես գալիս եմ իմ ընթերցողներին յայտնելու, որ այդ բոլոր գործողութիւնները՝ միմիայն մի նպատակի ծառայեցին ու հասան — «դիպլոմատիայի միջամտութեանը», որ այդ գործողութիւնների վրայ

1) «Մշակ» № 209.

հիմնուելով ու նրանց վրայ յենուելով միմիայն հնարաւորութիւն ունեցաւ «հայկական հարցը» բարձրացնել, ինչպէս յիշեցի, արդէն եօթներորդ շրջանում:

ԺԳ.

Կ. Պոլսոյ ուսանական դեսպան Գիրը՝ 191 թ. նոյեմբերի 26-ին՝ արտաքին գործերի մինիստրին ուղարկած հեռագրումը յայտնում է թէ՛ 1895 - 1896 թուականների մեծ ջարդերից յետոյ՝ տաճկահայերը մինչ օրս ոչ մի ապահովութիւն և հանգստութիւն չունենալով քրդերի ձեռքից՝ սկսել են անկեղծօրէն դէպի Ռուսաստանը ձգտել: Եւ ժողովրդի այդ համակրութիւնը մուտք է գործել նոյնիսկ հայ բուրժուայի և ինտելիգենցիայի մէջ:

— «Վանի, Բայազետի, Թիֆլիսի, Էրզրումի և Տրապիզոնի մեր հիւպատոսները, — գրում է դեսպանը, — միարեւրան վկայում են, որ այժմ հայերը, ամենքը առանց կուսակցական խտրութեան, Ռուսիայի կողմն են, Վանի հիւպատոսի օգնականը մինչև անգամ հեռագրում է նոյեմբերի 21-ին թէ՛ «այժմ բոլոր հայերը Ռուսիայի կողմն են և սրտանց ցանկանում են, որ մեր զօրքերը գան. կամ Ռուսիայի հակողութեամբ բարենորոգումներ մտցուին»: Բայազետի հիւպատոսի օգնականը նոյեմբերի 21-ին նոյնպէս հե-

ուագրում է թէ՛ «բոլոր հայերը, անխտիր, «շատ թշնամաբար են» վերաբերում դէպի թիւրքերը և խիստ ցանկանում են, որ Ռուսիան գրաւէ և իր հովանաւորութեան տակ վերցնէ Հայաստանը»:

Այժմ ամենայն Հայոց Կաթողիկոսը, Ն. Մ. Կովկասեան Փոխարքայի միջոցաւ, դիմելով Ռուսիային, որպէս «Արևելեան քրիստոնեաների դարաւոր հովհանաւորին», յանուն Աստուծոյ պաղատում է, որ Ռուսիան «իր հովանաւորութեան ներքոյ վերցնէ» բազմաչարաչար տաճկահայ ժողովրդին»:

ԺԴ.

— «Հայոց ազգի Հոգևոր Պետի պաշտօնապէս յարուցած այս խնդիրը, — շարունակում է դեսպանը, — Ռուսիայի համար «պէսակաւ առաջնակարգ խնդիր է», որ բազմակողմանի մշակողմն է պահանջում, որին ես մտադիր եմ շուտով ձեռնարկել, երբ (Հայոց) Պատրիարքարանից և մեր հիւպատոսներէց պահանջած տեղեկութիւններն ստանամ»:

«Ինձ յայտնի է, — աւելացնում է դեսպանը, — որ այստեղի հայկական շրջանները մի խնդիր են պատրաստում առաջիկայ խաղաղու-

1) Հնդգծումները միշտ իմն են:

թեան կոնֆերենցիայի ժամանակ Մեծ Պետութիւններին ժատուցանելու: Սակայն դէպքերի բերմամբ՝ կարող է կօնֆերենցիայի հաւաքուելուց շուտ սրուել խնդիրը: Եւ այն ժամանակ՝ «ձեռներէցութիւնը մեր ձեռքից դուրս պրծած կը լինի <sup>1)</sup>»: Ուստի ես անհրաժեշտ եմ համարում կաթողիկոսին և Կ. Պօլսոյ Պատրիարքին հաւաստի կացուցանել, որ կայսերական կառավարութիւնը «հակում է» հայերի խնդրի կողմը, և հարկաւոր ժամանակ, «հնարաւոր պաշտպանութիւն» ցոյց կը տայ»:

«Մի այսպիսի խոստում, թէկուզ «շատ ընդհանուր կերպով ձևակերպած, տաճկահայերին յոյս կը տար, որ նոր աւարառութիւններ և ջարդեր եղած ժամանակ» մենք նրանց կօգնենք: Եւ այսպիսով՝ նրանց «յետ կը կասեցնէր Մեծ Պետութիւններին դիմելու նրանց մտադրութիւնից: Եւ երբ մենք հայերին այսպիսի «ընդհանուր» խոստում տուինք պրծանք, — այնուհետև ձեռաց կարող ենք նրանց հասկացնել, որ «առայժմ անյարմար եմք » համարում հրապարակ դուրս գալ»:

ԺԵ.

«Գալով այն եղանակին, — շարունակում է

1) Реформы въ Арменіи № 1.

դեսպանը, — որով տաճկահայերին պաշտպանելու «մեր ենթադրութիւնները» կարող է արտայայտուել, — ես պէտք է յայտնեմ, որ հայերի ցանկացած մեր գրաւումը հայկական վիլայէթներին՝ «զեռ կանխաժամանակեայ է»։ Սակայն Օսմանեան կայսերութեան բարենորոգութեանը ձեռնարկելիս՝ չպէտք է մոռանալ թէ ինչ ցաւալի վիճակի ենթարկուեցաւ հայկական վիլայէթների բարենորոգման համար սահմանուած 1895 թ. օրէնքը։ Ուստի և այդ վիլայէթների ենթադրելի բարենորոգումների համար՝ հաստատուն երաշխիք սահմանել, այդ վիլայէթները դնելով «մեր» կամ երոպական ազենանների իսկական հսկողութեան տակ։

Միևնոյն ժամանակ այս ևս պէտք է ի նրկատի ունենալ, որ թիւրքիայում տիրող անիրշխանութեան պատճառ, «բարենորոգումները ցանկալի անգորրութիւն կարող են չմտցնել։ Ուստի և մենք պատրաստ պէտք է գտնուինք՝ մեր զօրքերը այդ վիլայէթները մտցնել հարկաւոր դէպքում» <sup>1)</sup>։

ԺԶ.

Պօլսոյ դեսպանի վերոյիշեալ ընդարձակ հետազիրը և վեհափառ կաթողիկոսի խնդրագիրը

1) Реформы въ Арменіи № 1.

ստանալուց յետոյ՝ մինիստր Սազոնովը՝ նոյեմբերի 30-ին մի նամակ գրեց նոյն դեսպանին, որի մէջ ասում է, որ հայոց կաթողիկոսի խնդրագրի բովանդակութիւնը Պետրոգրադի Օսմանեան դեսպանին հաղորդելով՝ «բարեկամաբար» պահանջել է, որ Բ. Գուռը չընդադրի այլ ևս Տաճկահայաստանում բարենորոգումներ մտցնելու «ինքնուրոյնաբար, որպէսզի հայկական հարցը սուր կերպարանք ստանալով՝ առիթ չտայ երոպական պետութիւններին միջամտութեանը, և Ռուսաց և Օսմանցոց հարեանական լաւ յարաբերութեան վատանալուն։

Բացի զրանից Սազոնովը առաջարկել է Օսմանեան դեսպանին, որ երոպական Տաճկաստանից հալածուած մահմեդականներին Բ. Գուռը չզեհեղէ հայաբնակ վիլայէթներում, այլ Միջագետքում, ուր շատ ազատ հողեր կան նրբանց համար։

Ի վերջոյ Սազոնովը պահանջում է Գիրսից, որ իր այս նամակի բովանդակութիւնը՝ նա ինքը ևս, իր կողմից, հաղորդէ Օսմանեան արտաքին գործերի մինիստրին <sup>1)</sup>։

ԺԷ.

Ռուսաց արտաքին գործերի մինիստրի այն

1) Реформы въ Арменіи № 2.

առաջարկութիւնը թէ՛ թող Բ. Դուռը շտապի «ինքնուրոյնաբար» բարենորոգումներ մտցնելու Տաճկահայաստանում. Օսմանեան կառավարութեան համար շատ ձեռնտու էր՝ ևրոպական և թէ՛ մանաւանդ ուսական միջամտութիւնը՝ եթէ ոչ իսպառ խափանելու, գէթ յետացնելու, ձրգ-ձգելու:

Ուստի Բ. Դուռը ձեռաց բարենորոգումների մի ծրագիր մշակելով նախ՝ Ազգային ժողովի Խառն Խորհրդի երկու անդամների կարծիքը լրսեց և ապա մի յատուկ Յանձնաժողովի քննութեանը յանձնեց: Յանձնաժողովի մէջ մի քանի հայեր ևս հրաւիրուեցան, որոնց թւումն էր նաև Մաղաթիա արքեպիսկոպոս Օսմանեանը:

Յիշեալ ծրագրի համառօտ բովանդակութիւնը դուրս է բերուած Ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան գիւնագիտական <sup>1)</sup> և «Մշակ» օրաթերթի մէջ <sup>2)</sup>: Բայց որովհետև այդ ծրագիրը չիրագործուեց, վասն որոյ ես աւելորդ եմ համարում արտագրել այստեղ, մանաւանդ որ ծրագրի առթիւ եղած բանակցութիւններից՝ ընթերցողը, որոշ չափով, կրմբունէ նրա էութիւնը:

Այստեղ այսքանս միայն կասեմ, որ Յանձնաժողովի հայ ներկայացուցիչներից երկուքը՝

1) Реформы въ Арм. кр. 13 № 8.

2) 1612 № 287.

սրբ. Օրմանեան և դօկտոր Տաղաւարեան մի քանի լուրջ և հիմնաւոր դիտողութիւններ արին, որոնք և ի յարգանս առնուեցան:

Ի վերջոյ սրբազան Օրմանեանը ասելով թէ՛ «գահլիճները յաւիտենական չեն, կրնան նոյնիսկ սեփիմները փոխուիլ. ուստի կառավարութիւնը պէտք է այնպիսի հիմնական ծրագիր մը մէջտեղ բերէ, որ որևէ գահլիճ ալ զայն ընդգրկէ, առանց կուսակցական նկատումներու», — աւելացրեց՝ «մենք այստեղ եկած ենք լոկ իբրև խորհրդատու, այսինքն մարդիկ, որ պտտելով տեսած ու կարգալով գիտցած են երկրին պէտքերը: Սակայն բուն «այն մարմինը, որ հեղինակութիւն ունի կառավարութեան հետ լրջօրէն քննելու» բարենորոգումների այս կենսական խնդիրը, Պատրիարքարանն է, այսինքն՝ պատրիարքը իր վարչութիւնով» <sup>1)</sup>:

Յանձնաժողովը յայտնեց, որ այդպէս էլ կը լինի. այսինքն՝ ծրագիրը կը յանձնուի նաև Պատրիարքարանի հայեցողութեանը: Եւ յանձնուեց էլ:

ԺԸ.

Այդ ծրագիրը Ազգային ժողովի առաջ դրուեցաւ գեկտեմբերի 21-ին: Սակայն Ռուսաց

1) Նոյնը № 288.

զեսպանը գրում էր Մազունովին, որ համաձայն իր ունեցած տեղեկութիւնների, այդ ծրագիրը բաւարարութիւն չէ տալիս Պատրիարքարանին և նրա կից շրջաններին: Վերջիններս գտնում են, որ «հայերի առաջին և ամենագլխաւոր պահանջը», որոյ հանդէպ երկրորդական տեղ են բռնում ծրագրի միւս կէտերը, այն է, որ բարենորոգումների գործադրութիւնը ապահովուած լինի «սուսական կամ միջազգային երաշխաւորութեամբ»: Իսկ երաշխաւորութեան ամենալաւ եղանակը՝ «սուսական գրաւումն է»: Իսկ եթէ հայերի այս ցանկութիւնը «մօտ ապագայում» տեղի չունենայ, — յայնդէպս վեց վիլայէթների համար մի զերագոյն կամիսար ունենալու ծրագիր է մէջ տեղ գալու, որ նշանակելու է Սուլթանը՝ պետութիւնների համաձայնութեամբ և Կոմիսարը օտարագրի է լինելու»<sup>1)</sup>:

ժԹ.

Ինչպէս ասացի՝ ծրագիրը Ազգային ժողովի առաջ դրուեցաւ զեկտեմբերի 21-ին, որտեղ այն միտքը պաշտպանուեցաւ, ինչ որ առաջարկել էր սրբոգան Օրմանեանը Բ. Դոսն ձեռքով կազմուած Յանձնաժողովում, այսինքն՝ որ «ծրագիրը այնպէս պիտի լինի, որ ոչ մի միսիստ-

1) Реформы въ Арм. кр. 14 № 8.

րութիւն և ոչ մի իշխանութիւն ոչ մի պարագայում և ոչ մի ժամանակում, կամ որեէ կերպով, նրա գործադրութիւնը չկարողանայ խափանել, կամ ժամանակաւորապէս դադարեցնել»:

Գալով երաշխաւորութեան հարցին՝ Ազգային ժողովը թէև այդ մասին լուրթեամբ անցաւ, սակայն բոլոր ճառախօսմաների արտայայտութիւններից պարզ երևաց, որ Ազգային ժողովը «միջազգային» երաշխաւորութեան կողմն է<sup>1)</sup>:

Ի.

Ազգային ժողովի այս տրամադրութիւնը իմանալով, իմանալով նաև, որ Լոնդոնի և Փարիզի հայկական կոմիտէաները մտադիր են ուղղակի Մեծ պետութիւնների աջակցութեանը դիմելու, — ուսս դիպլոմատիան գտաւ, որ այդպիսով Տաճկա-Հայաստանի բարենորոգումների «ձեռնէրէցութիւնը իր ձեռքից դուրս կուգայ», ուստի և Գիրսը, — Պօլսոյ զեսպանը փութաց իր կողմից, մասնաւոր կերպով, հաղորդել հայերին որ ինքն արդէն Բ. Դոսնից պահանջել է բարենորոգումները փութացնել և Բալկանների մահմեդականներին Տաճկա-Հայաստան չզաղթեցնել:

— «Սակայն, իմ կարծիքով, — գրում է զես-

1) Նոյնը եր. 20—21 № 11.

պանը արտաքին գործերի մինիստրին, — հայերը այդքանով չեն բաւարարուի: Ուստի ինձ թւում է, որ ոյժմ ժամանակն է, որ մենք այս հարցի մասին՝ բանակցութեան մէջ մտնենք Երրեակ Համաձայնութեան պետութիւնների հետ: Միաժամանակ ես կարծում եմ, որ քերտու մենք կարող կը լինէինք հայերին յայտնել, որ «նրանց կողմից յեղափոխական շարժում տեղի չունենալու դէպքում անգամ, մենք, այնուամենայնիւ, չէինք հրաժարուիլ նրանց պաշտպանելուց, եթէ որ ջարդեր սկսուին»<sup>1)</sup>:

ԻԱ.

Պոլսոյ դեսպանի այս կարծիքը յարգելով՝ Մինիստրութիւնը դեկտեմբերի 13-ին բանակցութեան մէջ մտաւ Անգլիայի և Ֆրանսիայի հետ<sup>1)</sup>: Սակայն Գիրսը կասկածելով թէ գուցէ մինչև այդ բանակցութեան ձեռնարկուելն ու այս կամ այն հետևանքի հասնելն՝ Բ. Դոան ծրագիրը անցկենայ՝ թիւրքական հսկողութիւնը (կօնտրօլ) եւրոպականի փոխարկուելով, դեսպանը՝ դեկտ. 15-ին Սազանովին ուղղած գրութիւնում ցանկութիւն յայտնեց, «որ բարենորոգում-

1) Реформы въ Арменій եր. 8 № 4.

2) Նոյնը եր 8, № 5.

ների վրայ հսկողների թւում ուսաներ ևս լինին, և յամենայն դէպէս մեզ հակառակ մարդիկ չնշանակուին»<sup>1)</sup>:

Այնուհետև դեսպանը ընդունեց կովկասահայերիս քաջ յայտնի բժիշկ Զաւրիեվին, որ Տաճկա-Հայաստանից նոր էր վերադարձել Պօլիս և գնաց այցելութեան ուսաց դեսպանին, հայկական հարցի մասին զեկուցում տալու համար:

— «Բժիշկ Զաւրիեվը, — գրում է դեսպանը Սազանովին, — կայսերական Մինիստրութեանը քաջ յայտնի է: Նա դաշնակցական է, որ 1905 թուին բժշկական խումբ կազմակերպեց Տաճկահայերին բժշկութիւն հասցնելու նպատակաւ և՛ 1907 թուին Մինիստրութեանը մի տեղեկագիր էր ներկայացրել հայկական հարցի մասին»<sup>2)</sup>:

«Բժիշկ Զաւրիեվը, որ Տաճկա-Հայաստանում գործած ճանապարհորդութիւնից նոր է վերադարձել (գրում է դեսպանը), իր ազգակիցների (տաճկահայերի) վիճակը շատ վատ դուրս բերեց:

«Անձի և գոյքի անապահովութիւն, հողային գործերի կատարեալ անկարգութիւն, թիւրք իշխանութիւնների դատաւորների կողմից աչառու վերաբերմունք դէպի քրդերը, — անա տաճկահայ

1) Նոյնը եր. 10, № 6.

2) Реформы въ Арменіи եր. 11, № 7.

կեանքի գլխաւոր վերքերը: Եւ բժիշկ Չաւրիեվի կարծիքով, այդ վերքերը կարող է բժշկել «միմիայն Սուսստանը կամ անընդմիջապէս», կամ Օսմանեան կառավարութեան վրայ ճնշում գործելով: Բժիշկ Չաւրիեվի ասութեամբ՝ մօտ ապագայում հայերի մասսայական կոտորած չի նախատեսուում: Բայց նա հաւաստիացնում է, որ հայերի մասնակի սպանութիւնները քրդերի ձեռքով փոքր ինչ շատացել են և նախընթաց տարիների փորձը ցոյց է ապրիս, որ այդ մասնակի սպանութիւնները հետզհետէ աճելով՝ կարող են մասսայական կոտորածների և ջարդերի փոխարկուել»:

«Բժիշկ Չաւրիեվը, — շարունակում է դեսպանը, — այն կարծիքի է, որ ջարդեր և կոտորածներ առաջ բերելը՝ միանգամայն թիւրք իշխանութիւններից է կախուած: Եւ եթէ ուսական կառավարութիւնը խստութեամբ նախագուշայնէ՝ «կատաստրոֆը տեղի չի ունենայ»: Մի այդպիսի միջամտութիւն խնդրելով՝ բժ. Չաւրիեվը միևնոյն ժամանակ իմ խորհուրդը հարցրեց թէ Տաճկաստանի վերաբերութեամբ՝ ինչ զիրք բռնեն հայերը և թէ՛ հարկաւոր է արդեօք, որ նրանք զիմեն Ռուսիային և միւս եւրոպական Պետութիւններին»:

— «Ես պատասխանեցի իմ խօսակցին, — գրում է դեսպանը մինիստրին, — որ կայսերարական կառավարութիւնը շատ կարեկից է Տաճ-

կոհայերին: Ի վերայ կայսր ամենայնի նրանք — հայերը չպէտք է մոռանան, որ ներկայ ըոպէն բացառիկ պայմանների մէջ է գտնուում, ուստի նրանք իրանց վիճակը չպիտի վատթարացնեն անզգոյշ քայլերով: «Ամենատեղանը այն է, որ ամբողջ Եւրոպայի առաջ հայերը թիւրքական կամայականութեան զոհ մնան. այլ ոչ թէ քաղաքական յեղափոխականներ դառնան, որոնք օգտուելով թիւրքերի պատերազմական անյաջողութիւններից՝ իրենց ազգային իդէալները իրագործելու ձգտեն: — Այս պատճառաւ — շարունակում է դեսպանը իր հրահանգները. — «հայերը թիւրքերին բնաւ չպէտք է զրգոեն, նամանականդ նրանք չպէտք է ապստամբեն: Նմանապէս նրանք որևէ քաղաքական պահանջ չպիտի անեն Եւրոպայից»:

Միւս կողմից, սակայն, հայերը, հարկաւ, իրաւունք ունին ինչպէս «մամուլում, նոյնպէս և իրենց կոչերում» ընդհանուրի ուշադրութիւնը հրաւերել այն սոսկալի հալածանքների վրայ, որոց նրանք ենթարկուում են թիւրք և քիւրդ իշխանաւորների կողմից:

— «Բժիշկ Չաւրիեվը, — վերջացնում է դեսպանը իր գրութիւնը, — ինձ յայտնեց, որ իմ խօսքերը նա կընդունէ ի հրահանգութիւն և ըստ այնմ կազդէ իր կուսակցական անդամներին և, առհասառակ, իրեն համախոհների վրայ: «Վերջ ամենայնի Չաւրիեվը յայտնեց, որ «հայերի

ընդհանուր միտքն այն է, որ նրանց վիճակը Ռուսիայի ձեռքին է» <sup>1)</sup>։

ԻՖ.

Դեպքանի այս հրահանգի ներքին և ճիշտ իմաստը ըմբռնելով՝ բժիշկ Ջաւարիեվը վերագարձաւ Տաճկա-Հայաստան ըստ այնմ գործելու։ Իսկ մի քանի օր յետոյ՝ Ֆարիզի ուսուսաց պեսպանը «Temps» օրաթերթի մէջ՝ հետեւեալ կիսապաշտօնակա՝ գրութիւնը հրատարակեց ի տեղեկութիւն և ի միամտութիւն հայերի։

«Կայսերական կառավարութիւնը հետեւելով իր դարաւոր աւանդութեան և համակուած խորին համակրութեամբ դէպի հայ ժողովրդի տանջանքները՝ մտադիր է ապագայում ևս ամենաբարեհաճ դիրք բռնել թիւրքիայի հարստահարեալ հայ ժողովրդի կարիքների վերաբերմամբ և գործադրել իր բոլոր ջանքերը, որպէսզի ջնջել տայ այժմ գոյութիւն ունեցող զեղծումները և իրագործել տայ անհրաժեշտ բեֆօրմները։ Սակայն Կայսերական կառավարութիւնը կարծում է, հէնց իրանց հայերի շահերի տեսակէտից, «սերկայ բոպէն յարմար չէ» արժարծելու հայկական հարցը իր ամբողջ ընդարձակութեամբ։ Այդ

1) Реформы въ Арм. Կր. 12 № 7.

կարևոր և սուր հարցը օրակարգի մէջ կը մտցուի իսկոյն, երբ պատերազմը վերջանայ և քաղաքական վիճակը կորցրած կը լինի իր լարուածութիւնը. Բայց Բաղկանեան ճգնաժամը դեռ չվերջացած՝ հայկական հարց բարձրացնելը՝ կարող է երկպառակութիւնները և ընդդիմութիւն առաջ բերել Մեծ Պետութիւնների ոմանց կողմից և այդ անհամաձայնութիւնը կարող է փասել գործին։ Այդ մտքով և ծանուցումն է արուած Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսին» <sup>1)</sup>։

Փարիզի դեպքանի այս գրութիւնը՝ պատասխան էր ոչ միայն Նորին Սրբութեան միջնորդութեանը, այլ նաև, առաւելապէս՝ «Կ. Պօլսոյ հայոց պատրիարքի, թիւրքահայ հասարակութեան այլ և այլ հատուածներու ներկայացուցիչների և արտասահմանի գաղութների խնդրանաց, որոնք դիմել էին Ռուսաստանի օգնութեան» <sup>2)</sup>։

Պատասխան էր նմանապէս և Սինգափուրի հայ գաղութի խնդրանքին, որով այդ գաղութականները ընդունելով «տեղույս ուսուսաց հիւպատոսի խորհուրդը՝» դիմել էին նրան, որ միջնոր-

1) «Մշակ» 1913 № 3.

2) «Մշակ» 1913 № 3. Արշակ Զօպանեանի նամակը։

դէ իր (Ռուսաց) կառավարութեանը նպաստելու 61 յօդուածի գործադրութեան<sup>1)</sup>: Նոյնպիսի դիմումն արել էր Ռուսաց կառավարութեանը՝ Ատրպատականի հայութեան կողմից՝ նաև Առաջնորդական փոխանորդ Կարապետ քահ. Մանուկեանը («Մշակ» № 43):

Ահա այս դրութեան մէջ էր գտնուում, սիրելի ընթերցող, հայկական հարցը, երբ 1912 թուականը յաւիտենականութեան գիրկը մտաւ:

Ի Գ.

Որովհետև ռուսական դիպլոմատիան գտաւ, որ հայկական հարցը զարթեցնելու ժամանակը դեռ չի եկել, ռուսի Վեհափառ Կաթողիկոսին խորհուրդ արուեցաւ, որ առայժմ մէկ պատգամաւորութիւն ուղարկէ Եւրոպա: Եւ Նորին Սրբութիւնը նշանակեց՝ նախագահութեամբ Եգիպտահայ Պօղոս փաշա Նուբարի, որի խորհրդով պիտի ընտրուէին յետոյ պատգամաւորութեան անդամները:

Այս որոշման մասին Վեհափառ Հայրապետի նամակն ստանալիս՝ Կովկասեան Փոխարքան 1913 թ. փետրուարի 7-ին դարձաւ արտաքին գործերի մինիստրին հետևեալ դրութեամբ՝

1) Նոյնը, № 25.

«Տարւոյս յունուարի 16-ին № 147 նամակով Ամենայն Հայոց Կաթողիկոսը յայտնեց ինձ, որ իր նշանակած պատգամաւորութեան նախագահ Պօղոս Նուբար փաշային հրահանգ է ուղարկուած՝ չդիմել Լոնդոնի դեսպանաժողովին, «այլ առայժմ իր գործունէութիւնը ամփոփել նախապատրաստելու Եւրոպական պետութիւնների իշխանաւորների և ազգեցիկ շրջանների կարծիքներն ու տրամադրութիւնները» յօդուածաճակահայաստանում հարկաւոր բարենորոգումներ մտցնելու գործին ընդ հսկողութեանը Ռուսաստանի»:

Ընդ սմին, — շարունակում է կոմս Վօրօնցով-Իաշկովը, — Գէորդ Կաթողիկոսը հազորդում է ինձ, որ ինքը Կ. Պօլսից և Տաճկահայաստանից շարունակ զեկուցագրեր է ստանում, որոնցի երևում է, որ քրդերն ու զինուած խմբերը շարունակում են հայերին կողոպտել ու կոտորել՝ առանց որևէ արգելքի հանդիպելու իշխանութեան և օրէնքի կողմից: Բացի դրանից, ըստ վերջին տեղեկութիւնների, Բալկանեան թերակղզուց վերջերումս Անատոլիա գաղթող մահմեդական ժողովուրդը՝ տեղւոյն քրիստոնեայ ազգանակութեան մէջ են տեղաւորում, և այսպիսով նոր ի նորոյ լարում են՝ առանց այն էլ սուր հողային հարցն ու ատելութիւնը: Յամառ և երկիրալի լուրեր են տարածուած քրդերի պատրաստութեան և առաջիկայ ինչ որ գործողութիւնների մասին ընդդէմ Անատոլիայի քրիս-

տոնեայ տարրի—հայերի, որոց վրայ քրդերը ուզում են գերիշխող դեր խաղալ Տաճկաստանի մի քանի նահանգներում: Եւ այդ մասին քրդերի մի քանի ցեղերի Շէյխեր խորհրդակցելով՝ արդէն դիմել են Բ. Իրան՝ Կ. Պօլսում բնակւող մի քանի ազգեցիկ քրդերի միջոցաւ» <sup>1)</sup>:

— «Այս ամենը ի նկատի առնելով,—վերջացնում է Փոխարքան իր գրութիւնը,—Քէտրգ կաթողիկոսը յարակցում է, որ ինքը իր հօտի հետ միասին՝ մեծայոյս է որ կայսերական կառավարութիւնը՝ իր դեսպանին և Տաճկաստանի հիւպատոսներին հարկաւոր հրահանգ կուղարկէ, որպէսզի նրանք իսկական միջոցներ գործ դնեն, նախքան բարենորոգումներ մտցնելը, պահպանելու հայերին քրդերի և թիւրքերի չարագործութիւններէ» <sup>2)</sup>:

ԻԴ.

Կաթողիկոսի պատուէրը,—այսինքն՝ առայժմ հայկական հարցը չբարձրացնել,—Պետրոգրադից հաղորդեցին Պօղոս Նուբար փաշային

1) «Մշակ»-ը հաղորդում էր, որ քրդերն իրանց համար ինքնավարութիւն են պահանջում: Եւ եթէ Բ. Իրանը նրանց խնդիրը մերժէ, մտադիր են Ռուսիայի պաշտպանութիւնը խնդրել:

2) Реформы въ Арм. кр. 22, № 12.

ի հրահանգութիւն և փաշան, բնականաբար, համակերպեցաւ: Բայց մօտ մի ամսից յետոյ՝ փաշան ներկայանալով Փարիզի ռուսաց դեսպանին՝ ցանկացաւ իմանալ թէ ժամանակ չէ՞ միթէ՞ ձեռնարկելու հայկական հարցի յարուցմանը, երբ արդէն վերջանալու մօտ է Բալկանի ազգերի և թիւրքերի մէջ ծագած պատերազմը: Փաշան այս ևս աւելացրեց, որ հայերը իրենց բոլոր յոյսը Ռուսիոյ հզօր պաշտպանութեան վրայ են դրել և ցանկանում են ամեն բանում հետևել ռուս կառավարութեան ցուցումներին, թէ ինքը արդէն ձեռնարկել է իր ընկերների հետ՝ բարենորոգումների ծրագրի մշակման, որը աւարտելուց յետոյ՝ ներկայացնելու է Կաթողիկոսին: Իսկ Նորին Օծութեան հաւանութիւնը ստանալուց յետոյ՝ կը ներկայացնէ նաև իրան,— դեսպանին՝ իր կառավարութեան բարենայեցողութեանը մատուցանելու համար:

— «Ես պատասխանեցի Պօղոս Նուբար փաշային—գրում է դեսպան Իզվոյսկին—արտաքին գործերի մինիստրին,—որ այս ամենը ես կը հասուցանեմ ի տեղեկութիւն Ձեր և կըսպասեմ խոստացած բարենորոգումների ծրագրին:

Իսկ առ այժմ յատուկ խնդրում եմ նրանից (Պօղոս փաշայից), «որ ոչ մի քայլ չանէ առանց համաձայնութեան և թոյլտուութեան կայսերական կառավարութեան, որը,—ինչպէս փա-

շային ևս յայտնի է, — ամենաշերմ կարեկցութիւն ունի հայ ազգի վիճակի և բարենորոգումների հարցի մասին: Փաշայի այն հարցմանը թէ՛ կարո՞ղ է նա արդեօք ինձ հաղորդածները՝ Ֆրանսիական արտաքին գործերի մինիստրին ևս յայտնել, — ես յայտնեցի թէ՛ այդ մասին իմ կողմից ոչ մի արգելք չկայ»:

«Ինձ հետ ունեցած խօսակցութիւնից մի քանի օր յետոյ Պօղոս Նուբար փաշան այցելած է պ. Ժօննարին (մինիստրին) և նրա մօտ մի թուղթ էր թողել, որի մէջ հայերի ցանկութիւններն էր արտայայտել»:

Այս բանը ինձ հաղորդեց Ժօննարը, աւելացնելով որ նրա կարծիքով, հայկական հարցի վրայ շատ լուրջ ուշադրութիւն պէտք է դարձնել, և եթէ Պետութիւնները կամենում են Փոքր-Ասիայում ծագելիք վտանգաւոր բարդութիւնների առաջն առնել, նրանք անշուշտ պարտաւոր են ներկայ հանգամանքներում օգտուեն Բերլինի դաշնագիրը և 1895 թուականի նախագրութիւնները ի կատար ածել»<sup>1)</sup>:

Իհ.

Հայկական հարցի նկատմամբ՝ XX-րդ դարում՝ Գերմանիան նոյն ընթացքը բռնեց, ինչ

1) Реформы въ Арменіи եր. 23, № 14.

ընթացք որ բռնել էր նախընթաց XIX-րդ դարում Անգլիան:

Անգլիայի նման Գերմանիան էլ՝ միանգամայն անվստահ թէ՛ Ռուսիան հայկական հարցին ձեռնամուխ է լինում անշահասիրութեամբ, այլ ոչ իր սովորական աշխարհակալական ձգտումներով<sup>1)</sup>, այդ ձգտումներին հակառակորդ հանդիսացաւ: Եւ ինչպէս Անգլիան Ռուսիային հակառակորդ դուրս եկաւ՝ իր շահերի, այլ ոչ հայերի օգտի համար, միևնոյն նպատակով Ռուսիային հակառակորդ դուրս եկաւ՝ և՛ Գերմանիան:

Եւ որովհետև Ռուսիան գործում էր իր դաշնակիցների օգնութեան վրայ յենուելով՝ նոյնը արաւ և՛ Գերմանիան իր զինակիցների վրայ յենուելով: Քաջ գիտնալով որ Ռուսիայի Փոքր-Ասիայում առաջանալը՝ վնասակար է լինելու իր հաշիւներին, առաւելապէս տնտեսականին, Գերմանիան տակաւին 1896 թուին, այսինքն՝ հայկական մեծ ջարդերից անմիջապէս յետոյ՝ ձեռնարկեց հայերին գրաւելու:

Գերմանացի գործիչների շարքում, այդ միջոցին, յայտնի էր Փոքր-Ասիայի և Պարսկաստանի գործերին քաջահմուտ զօգտոր Լէպսիուս, յայտնի եգիպտագէտի որդին, որ մի քանի ան-

1) Реформы въ Арм. եր. 46 № 38.

գամ ճանապարհորդել էր յիշեալ երկիրներում:

Լէպսիուսը Գերմանիայում մի ընկերութիւն էր կազմել կոթական և մարդասիրական նպասակով:

Ընկերութիւնը կոչոււմ էր «Deutsche Orient Mission», Փոքր-Ասիայում և Պարսկաստանում զպրօցներ պահելու համար՝ և 10-ից մինչև 12 միլիօն մարկ էր ծախսել:

Սկզբի տարիներում Լէպսիուսի գործունէութեան վրայ գերմանական կառավարութիւնը առանձին ուշադրութիւն չգարձրեց, բայց վերջերում երբ ուսական դիպլոմատիան ձեռներէց եղաւ հայկական հարցին և հայերի իրանց միջոցաւ սկսեց առաջ մղել այն, — այն ժամանակ անա առաջ եկաւ Գերմանիան և Լէպսիուսի կազմած ընկերութիւնը, անպաշտօն կերպով, իր հովանաւորութեան տակ վերցնելով՝ սկսեց նպաստել նրան թէ բարոյապէս և թէ նիւթապէս:

ԻԶ.

Ինչպէս նախընթաց հատուածներում տեսանք՝ Ռուսիան ցանկանում էր, որ Տաճկա-Հայաստանում բարենորոգումներ մուծէ ինքը թիւրքիան, առանց Եւրոպայի միջամտութեան: Եւ Բ. Գուրը ձեռնարկեց այդ բանին յատուկ յանձնաժողով կազմելով և իր կազմած ծրագիրը Հայոց Ազգային ժողովի հաւանութեանը առաջարկելով: Սակայն Ազգային ժողովը՝ կողմնակի

մարդկանց թելադրութեամբ պահանջեց Եւրոպայի, և մասնաւորապէս Ռուսիայի, հսկողութիւնն ու հովանաւորութիւնը: Ի գուրը արտաքին գործերի մինիստր Գարրիէլ Էֆէնդի Նորատունկեանը, — նրա հետ նաև մի քանի հայ թերթերը, — խորհուրդ էին տալիս Եւրոպային դիմելու մեծ ջիւղ կանգնել, և առայժմ բաւականապէս Ռուսիայի կողմից, յօժարակամ տրուած ծրագրով: Տաճկահայերի պաշտօնական ներկայացուցչութիւնը և ազատամիտ երիտասարդութիւնը պնդելով պնդում էր՝ «Ոչ մէկ բանակցութեան մէջ մտնել թիւրք կառավարութեան հետ և յանձնել հայոց հարցը երոպական տէրութեանց ձեռքը և խնդրել, որ ուղղակի բանակցեն թիւրք կառավարութեան հետ և անոր պարտագրեն բարենորոգման լուրջ ծրագիր մը և այլ ծրագրային անմիջական և ամբողջական գործադրութեան իրենք իսկ հսկեն և մասնակցեն»: Թէ՛ «Եւրոպական Պետութեանց կատարելիք այս գործին մէջ, ռուսը ունի մասնաւոր ու գերակշիռ դեր մը, այս մասին ծանրանալն աւելորդ է, որովհետև ամեն հայ այսօր համոզուած է ատոր»<sup>1)</sup>:

ԻԷ.

1) «Մշակ» 1913 № 3. Արշակ Չոպանեանի նամակը:

Երբ Գերմանիան համոզուեցաւ, որ հայերի բերանով այսպէս խօսում է ուսական զիպլոմատիան մէկ կողմից, և ըստ տարածուած շուքերի, մտազիր է Բ. Իրան հետ փոխադարձախնութեան յանգելով՝ զօրքերը Տաճկան յատան մտցնել 1), — ահա այդ ժամանակ Գերմանիան պաշտօնապէս յայտարարեց, որ ինքը համաձայն է բարենորոգումների ծրագրին և չի թոյլ տալ, որ բարենորոգումների հարցը վճռուի առանց իրան և Բ. Իրան մասնակցութեանը:

Գալով Տաճկա-Հայաստանում տեղի ունեցող մեծ ու փոքր սպանութիւններին և կողոպտումներին քրդերի ձեռքով, — այդ ամենը, — առաջ Գերմանիան, — մասամբ ուսական ազիտացիայի հետևանք է քրդերի մէջ, որոց հետ նոյն կառավարութիւնը յարաբերութեան մէջ է գրտնուում, մասամբ և հայերի դէպի թիւրքերը բռնած զիրքի:

Քրդերի և ուս զիպլոմատիայի յարաբերութեան առթիւ՝ Գերմանիայի հետ համամիտ էր նաև Բ. Իուուր 2): Եւ հէնց այդ էր պատճառը, որ սկզբներում սիրտ չէր անում պատժել նրանց:

Գերմանիայի զրական պահանջին Պուսիան զիջանելով՝ 1913 մայիսի 29-ին Սազոնովը հե-

1) Реформы въ Аарменіи Կր. 28, № 16.

2) Дипломатическій архивъ, Կր. 37.

տեեալ հեռագիրը քաշեց Պօլսոյ դեսպանի վրայ՝ «Մեր ունեցած տեղեկութիւններով Գերմանիան և Աւստրիան 1) աշխատելու են, որ դեսպանաժողովին Բ. Իուուր ևս իր ներկայացուցիչը ունենայ, և Պօլսոյ գերմանական դեսպանին պատուիրուած է հաղորդել Մեծ վէզիրին մեր ձեռնբերէցութեան մասին» 2). հետեեալ օրը, այն է մայիսի 30-ին, Գիրսը հետեեալ հեռագրական պատասխանն ուղարկեց Սազոնովին՝ «Երբեակ Զինակցութեան դեսպանները նոյնանման հրահանգ են ստացել: Նրանց թոյլ է տրուում բանակցել իրենց ընկեր գեսպանների հետ այն պայմանով, որ 1) Սուլթանի գերիշխանութեան իրաւունքները չխախտուեն և 2) բարենորոգումների մասին եղած խորհրդակցութիւններին Օսմանեան կառավարութեան ներկայացուցիչը ես մասնակցի: Այս մասնակցութիւնը կարող է հարկաւոր զալ հայկական հահանգների համար կազմուելիք ազազայ կանոնադրութեան մանրամասնութիւնների քննութեան ժամանակ: Բայց ես կարծում եմ, շարունակում է Գիրսը, — որ Օսմանեան ներկայացուցիչները կարող է վնասակար լինել բարենորոգումների սկզբնական ծրագրերը: Ինչպէս, ևս և այն միտիմալ (նուազա-

1) Մի քանի օրից յետոյ նրանց միացաւ և Իտալիան. տես (Реформы въ Арм. № 45).

2) Реформы въ Арм. Կր. 46 № 42.

գոյն) պահանջները որոշելիս, Մեծ Պետութիւնները Բ. Իրանը պէտք է ներկայացնեն» <sup>1)</sup>։

ԻԸ.

Պոլսոյ դեսպանի այս հեռագիր ստանալով Սազոնովը 1913 մայիսի 30-ին հետեւեալ հեռագիրը քաշեց Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի, Աւստրիա-Հունգարիայի, Իտալիայի և Թիւրքիայի դեսպանին իրան՝ «Ես Գերմանիայի դեսպանի ուշադրութիւնը հրաւիրեցի այն հանգամանքի վրայ, որ Կ. Պոլսում կայանալի դեսպանաժողովին Օսմանեան ներկայացուցիչն մասնակից անելն՝ «միանգամայն ցանկալի չէ»։ Նրա ներկայութիւնը գործը կը ձգձգէ, մինչդեռ հայկական նահանգների վիճակը ձգձգում չի տանում։

«Օսմանեան ներկայացուցիչի մասնակցութեան լուրը՝ «հայկական շրջաններում շատ մեծ հրասթափութիւն առաջ կը բերէ»։ Մինչդեռ մեր ձեռներէցութիւնը այս գործում, որ միանգամայն զուրկ է շահախնդրութիւնից, երկիրը խաղաղացնելու նպատակ ունի բացառապէս։ Մենք կարծում ենք, որ այս խնդրում բոլոր պետութիւնները համերաշխ են և նրանց մշակած բարենորոգումները՝ հարկ եղած ներգործու-

<sup>1)</sup> Նոյնը էր 47, № 43..

թիւնը կանէ Օսմանեան կառավարութեան վրայ» <sup>1)</sup>։

ԻԹ.

Ռուսական կառավարութեան այս դիմումը Եւրոպայի պետութիւններին Բ. Իուռը լսելով՝ մասնաւոր կերպով յայտնեց Գիրսին, որ այդ ձեռնարկութիւնը ապարդիւն կանցնի և թէ աւելի լաւ կը լինէր, որ ռուս կառավարութիւնը իր առաջին առաջարկի վրայ հաստատ մնալով՝ թոյլ տար, որ Բ. Իուռը ինքը, ինքնուրոյնաբար մտցնէ բարենորոգումները, քան թէ Եւրոպայի միջատութիւնը հրաւիրելով։

Իրբար պատասխանեց թէ՛ ռուս կառավարութիւնը ստիպուած էր վերջին քայլն անելու, որովհետեւ Բ. Իուռը չկարողացաւ իր ժառանգիկն օգտուել նրա, — ռուս կառավարութեան, — սկզբնական առաջարկից, մինչդեռ Տաճկա-Հայաստանում կատարուած խժդժութիւններն ստիպում են շուտափոյթ օգնութիւն հասցնել քրիստոնեայ ժողովրդին <sup>2)</sup>։

Այս խօսքերի իմաստն այս է, ընթերցող, թէ որովհետեւ Բ. Իուռը չկամեցաւ ռուսաց հետ «տանստանու կերպով վերջացնել», Տաճկա-Հայաստանում կատարուած խժդժութիւններն ստիպում են շուտափոյթ օգնութիւն հասցնել քրիստոնեայ ժողովրդին <sup>2)</sup>։

<sup>1)</sup> Նոյնը էր. 49 № 46.

<sup>2)</sup> Реформы въ Арменіи էր. 48 № 44.

յաստանի բարենորոգումների գործը, ուստի նրանք էլ Եւրոպայի միջամտութիւնը հրաւիրեցին:

Գիրսի այս խօսքերը՝ ճիշտ այդպէս էլ ըմբռնեց Բ. Դրան ներկայացուցիչը, որ էր Սայիդ Խալիմ փաշան: Եւ յոյս յայտնեց, որ ինքը առիթ կունենայ առաւնձնապէս տեսակցել ու խօսակցել Գիրսի հետ այս հարցի շուրջը:

Կարծեօք սա այն Սայիդ փաշան է, որ 1878-ին, Բերլինի վեհաժողովից յետոյ՝ ոուս կառավարութեան հետ համերաշխութեան գալով՝ դիմադրեց Անգլիային և թոյլ չտուեց արեւորագումներ մտցնելու Տաճկա-Հայաստանում:

Թիւրք խորամանկ դիւանագէտը՝ այժմ ևս ուղեց այս կամ այն կերպով՝ ոուսաց հետ հետ գործը վերջացնելու: Բայց անհրաժեշտ էր նախապէս իր կառավարութեան հաճութիւնը ստանալ և համաձայնութեան գալու պայմանները որոշել, որ ապա թէ կարելի լինի առաւնձին տեսակցութիւնը ունենալ ոուսաց ղեսպանի հետ:

լ.

Բայց այս անգամ այդպիսի բան չէր կարող տեղի ունենալ, որովհետև Գրամանիան արդէն իր թաթը դրել էր գործի վրայ և չէր թոյտալ Ռուսաստանին և Թիւրքիային իրենց մէջ

սակասակո կերպով վերջացնելու բարենորոգումների հարցը, որի հետ կապուած էին Վերմանիայի շահերը, առաւելապէս անտեսականը:

Վերմանիայի համար անցնել գնացել էր Բիսմարքի քաղաքականութեան օրերը, երբ այդ երկաթեայ կանցլէրն ասում էր թէ՛ Պօմերանի մէկ զինուորի ոսկորներն անգամ նա չի փոխել ամբողջ Արևելեան հարցի հետ:

Վիլհելմ Բ.-ի քաղաքականութիւնը իր խոշոր ծրագրի մէջ մտցրել էր նաև հայկական բարձրաւանդակը: Եւ առանց նրա մասնակցութեանը այլևս անկարելի էր խօսք բաց անել Բերլինի վեհաժողովի 61-րդ յօդուածի մասին:

Այս պարագան լաւ հասկանալուցն էր, որ ոուսաց արտաքին գործերի մինիստրութիւնը՝ մայիս 30 թուակիր վերոյիշեալ շրջաբերականն ուղղեց բոլոր մեծ պետութիւնների ներկայացուցիչներին, հրաւիրելով նրանց Բերլինի վեհաժողովի 61-րդ յօդուածի գործադրութեան խնդրին ձեռնարկելու:

Բայց մինչև Մեծ Պետութիւնների պատասխան ստանալը՝ ոուս կառավարութիւնը ձեռնարկեց Պօլսոյ ղեսպանատան թարգման Մանդէլշտամի ձեռքով բարենորոգումների մի ծրագիր պատրաստելու, և ձեռաց պատրաստելուց յետոյ <sup>1)</sup>, ներկայացրեց դաշնակից պետու-

1) Այդ ծրագրի ֆրանսերէն բնագիրը՝ ոուսերէն

թիւնների՝ այն է Յրանսիայի և Անգլիայի, դեպ-  
պաների հաւանութեանը:

Եւ նրանք տուին իրենց հաւանութիւնը,  
առանց զգալի փոփոխութիւն մտցնելու ծրագրի  
մէջ:

ԼԱ.

Մի քանի օրից զինի՝ Երրեակ Զինակցու-  
թեան պետութեան Պօլսոյ դեպպանները ևս հրա-  
ման ստացան Տաճկա-Հայաստանի բարենորո-  
գումների համար գումարուելիք դեպպանաժողո-  
վին մասնակցել:

Մենք արդէն գիտենք, որ Գերմանիայի պա-  
հանջամաճք, ժողովին մասնակցելու էր և Բ. Դրան  
ներկայացուցիչը:

Բայց որովհետև Ռուսաստանը հակառակ  
գուրս եկաւ այդ առաջարկութեանը, ուստի Գեր-  
մանիան այլևս չպնդեց իր ասածի վրայ <sup>1)</sup>:

Այլ Մանդելշտամի ծրագրի հետ ծանօթա-  
նալով Պետրոգրադի իր դեպպանի միջոցաւ

Թարգմանութեամբ՝ տպուած է Արտաքին գործերի **Մի-**  
նիստրի պաշտօնական ժողովածուի մէջ, եր. 52—69:  
Ծրագիրը բաղկացած է քսաներկու մասերից և ամեն  
մասը մի քանի յօդուածներից: Ոմանք հայ թերթերից  
էլ տպեցին այդ ծրագրի թարգմանութիւնը:

<sup>1)</sup> Նոյնը եր. 69.

յայտնեց ուռւ կառավարութեանը, որ յիշեալ  
ծրագրով իսկապէս Տաճկաստանի բաժանման  
սկիզբն է գրուում, որպիսի մտքի հետ Գերմա-  
նիան բնաւ չի կարող հաշտուել, ուստի և պա-  
հանջում է, որ թիւրքերի ցանկութիւնը ևս ու-  
շագրութեան առնուի <sup>1)</sup>:

Որոշուեցաւ, որ Բ. Դուռը իր կողմից ա-  
ռանձին ծրագիր ներկայացնէ: Եւ նա ներկա-  
յացրեց:

ԼԲ.

Դաշնակից պետութիւնների ներկայացուցիչ-  
ները պահանջում էին, որ առաջ ուռւսական  
ծրագիրը քննուի, յետոյ թիւրքականը, մինչդեռ  
Երրեակ Զինակցութեան ներկայացուցիչները  
պահանջում էին, որ առաջ թիւրքական ծրագի-  
րը քննուի, յետոյ ուռւսականը:

Որոշուեցաւ հարցը յետաձգելով՝ նոր հրա-  
հանգ պահանջել <sup>2)</sup>:

Բայց ինչ տեսակ հրահանգ էլ որ ստացուէր,  
յամենայն դէպս՝ Դիրսի կարծիքով՝ Ռուսաս-  
տանը չպիտի թոյլ տար, որ առաջ Բ. Դրան  
ծրագիրը քննուի, յետոյ ուռւսականը <sup>3)</sup>:

<sup>1)</sup> «Նոյնը» եր. 76 № 58.

<sup>2)</sup> Նոյնը եր. 72 № 55.

<sup>3)</sup> Նոյնը № 51.

Ի տեղեկութիւնը ընթերցողին՝ այստեղ պէտք է յայտնել, որ ռուսական և թիւրքական ծրագիրներէ մէջ եղած էական տարբերութիւնն այն էր, որ առաջինը պահանջում էր բարենորոգում մտցնել միմիայն վեց, մեծ մասամբ հայաբնակ, նահանգներում, մինչդեռ թիւրքականը պահանջում էր բարենորոգումներ մտցնել ամբողջ Փոքր-Ասիայում:

Գիրսի կարծիքին Սազոնովն ևս համակերպելով՝ յուլիսի 27-ին (ն. տ.) հեռագրեց Բերլինի դեսպանին հէնց այդ մտքով էլ աշխատելու գերմանական կառավարութեան առաջ: Իսկ եթէ վերջինս անյողդողդ մնայ, — այն դէպքում ընդունել այն առաջարկը, որով բարենորոգումների ենթարկելի երկիրը՝ երկու մասի (սեկտոր) բաժանելու էր: Այդպէս էլ եղաւ:

Բայց այնուհետև էլ հրապարակ եկաւ այդ մասերի բաժանման ձևը:

Ռուսիան պահանջում էր, որ բաժանումը «ուղղահայեաց գծով» լինի, մինչդեռ Գերմանիան պահանջում էր «հորիզոնական գիծը»: Եւ գերման կառավարութեան այս ցանկութիւնը և՛ ընդունեց Ռուսիան այն յուսով, որ ժամանակի ընթացքում թերևս կարող են նորանոր փոփոխութիւններ առաջ գալ յօգուտ ռուսական ծրագրի:

Այս ամենից յետոյ՝ 1914 թուականի յու-

նուարի 16-ին, կամ ըստ նոր տղումարի փետրվարի 8-ին, ռուսաց Պօլսոյ դեսպանի և Օսմանեան կառավարութեան արտաքին գործերի մինիստրի մէջ մի դաշն կապուեցաւ:

ԼԳ.

Ահա այդ դաշինքի թարգմանութիւնը, որ Փրանսերէն բնագրից արել է «Արարատ»-ի խումբագրութիւնը.

«Եւրոպական երկու ընդհանուր վերատեսուչներ պիտի կարգուեն Արևելեան Անատոլիայի երկու հատուածների գլուխ՝ պարոն Ա. գլուխ այն հատուածի, որի մէջ մտնում են էրզրումի, Տրապիզոնի և Սըվազի վիլայէթները. և պարոն Բ... այն հատուածի գլուխը, որ հասկացւում է Վանի, Բիթլիսի, Խարբերզի և Դիարբէքի վիլայէթները:

Ընդհանուր վերատեսուչները կունենաղ իրանց հատուածների վարչական, արդարագատութեան, ոստիկանական և ժանդարմէրիական կօնտրոլը:

Այն հանգամանքներում, ուր հանրային ապահովութեան ոյժերը անբաւական կը գտնուեն, ընդհանուր վերատեսուչների խնդրանաց համաձայն, զինուորական ուժերը պիտի զրուեն իրանց տրամադրութեան տակ՝ ձեռք առնուած

միջոցները գործադրելու համար իրենց իրաւասութեան սահմաններում:

Ընդհանուր վերատեսուէները, կարիք եղած դէպքում, պաշտօնանկ են անում այն բոլոր պաշտօնեաներին, որոց մասին նրանք առաջ կը հաւաստիանան նրանց անբաւականութեան կամ վատ վարքի նկատմամբ յանձնելով դատարանին նրանց, որոնք օրէնքով պատժուող յանցաւոր գործողութեան մէջ կը գտնուեն. նրանք փոխարինում են պաշտօնագուրկ ստորակարգ պաշտօնեաներին անուանակիր (titularies) նորերով, որոնք պիտի լրացնեն օրէնքներով և կանոններով նախատեսած ընդունելութեան և ընդունակութեան պայմանները: Նրանք իրաւունք պիտի ունենան Ն. Մ. Սուլթանի կառավարութեանը ներկայացնել կարգուելիք բարձրագոյն պաշտօնեաներ: Պաշտօնանկութեան ձեռք առած բոլոր միջոցների մասին նրանք անմիջապէս հաղորդում են հեռագրներով պատշաճաւոր մինիստրութեան՝ համառօտակի պատճառաբանուած. ութ օրուայ ընթացքում նրանց պիտի ուղարկեն այդ պաշտօնեաների յուշատետր (dossier) և մի ղեկուցումն մանրամասն պատճառաբանութիւններով: Ծանրակշիռ դէպքերում երբ անհրաժեշտ են ստիպողական կարգադրութիւններ անել, ընդհանուր վերատեսուէները պիտի վայելեն անմիջական կախակալութեան իրաւունք դատական անփոխելի պաշտօնեաների նկատմամբ այն պայ-

մանով, որ անմիջապէս հաղորդուեն շարժառիթները դատաւտանական դեպարտամենտին:

Այն պարագաներում, երբ նշանք կը հաւաստիանան, որ կուսակալների ձեռքով կատարուած գործողութիւնները պահանջում են չափազանց ստիպողական միջոցների գործադրումն, ընդհանուր վերատեսուէները կը հաղորդեն հեռագրով պատճառք Ն. Մ. մինիստրութեանը, որն անմիջապէս ներկայացնում է մինիստրական խորհրդին և վերջինս պիտի որոշում կայացնի ամենաուշ չորս օրուայ ընթացքում՝ հաշուած ընդհանուր վերատեսչի հեռագիրն ստացուելուց:

Հոգային վէճերը պիտի վճուուեն անմիջական հսկողութեան տակ ընդհանուր վերատեսուէներին:

«Աւելի մանրամասն հրահանգները,» նկատմամբ ընդհանուր վերատեսուէների պարտականութիւններին և իրաւասութիւնների, կաշխատասիրուին «նրանց նշանակելուց յետոյ» և նրանց աջակցութեամբ:

Այն դէպքում, երբ տասն տարուայ ժամանակամիջոցում ընդհանուր վերատեսուէների պաշտօնատեղերը թափուր մնան, Բ. Գուրը աւկնկալում է յիշեալ ընդհանուր վերատեսուէն ընտրելու համար Մեծ Պետութիւնների բարեհաճ աջակցութիւնը:

Օրէնքներ, հրամանագրեր և պաշտօնական

յայտարարութիւններ պիտի հրատարակուեն իւրաքանչիւր հատուածում տեղական լեզուներով: Իւրաքանչիւր կողմն իրաւունք պիտի ունենայ դատարանների և վարչութեան առաջ գործածել իր լեզուն, «եբբ ընդհանուր վերատեսուչը հնարարու կը հստատի այդ»<sup>1)</sup>:

Դատարանների վճիռները պիտի գրուեն թիւրքերէն և, «եթէ հնարարու է», պիտի կցել կողմերի լեզուով մի թարգմանութիւն:

Ամեն մի վիլայէթի ժողովրդական լուսաւորութեան բիւջէում իւրաքանչիւր ազգատարրի (element ethnique) բաժինը պիտի նշանակուի կրթական տուրքով ժողովրդի լուսաւորութեան համար իր մասնակցութեան համեմատութեամբ: Կայսերական կառավարութիւնը ոչ մի արգելք չպիտի յարուցանէ հասարակութիւնների մէջ, եթէ կրօնակիցները կը նպաստեն իրենց դպրոցների պահպանման համար:

Ամեն մի օտոմանցի պարտաւոր է կատարել իր զինուորական ծառայութիւնն խաղաղութեան և հանգստութեան ժամանակ այն զինուորական վերատեսչութեան շրջանում, ուր նա բնակուած է: Այնուամենայնիւ կայսերական կառավարութիւնը պիտի ուղարկի, մինչ նոր կարգադրութիւն, եէմենի, Ասսիրիայի և Նէշէրի

1) Ընդգծումները միշտ իմն են:

հեռաւոր տեղեր ցամաքային զինուորական զօրամասեր, որ պիտի հաւաքի՝ Օտոմանեան կայսրութեան «բոլոր մասերից, այնտեղ բնակուած բնակիչների թուի համեմատութեամբ: Բացի դրանից պիտի զինուորագրի ծովային բանակի համար «ամբողջ կայսրութեան միջից առնուած նորակոչներ»:

«Համիդիէ» զօրագնդերը պիտի վերածուեն պահեստի հեծելագօրքի: Նրանց գէնքերը պիտի պահուեն զինուորական պահեստարաններում և նրանց կը բաժանուեն միայն զօրաշարժի կամ ռազմափորձի ժամանակ: Նրանք պիտի գտնուեն իրենց պատկանեալ շրջանի զօրաբանակի հրամատարների հրամանների տակ: Խաղաղութեան ժամանակ զօրագնդերի, վաշտերի և հատուածագօրքերի սպաները պիտի ընտրուեն Օտոմանեան կայսրութեան գործօն բանակից: Այդ զօրագնդերի զինուորները պիտի ենթարկուեն զինուորական ծառայութեան մի տարի ժամանակով: Այնտեղ ընդունուելու համար իրենք պիտի հայթայթեն իրենց ձիերը, նրանց սարք ու կարգով: Ամեն մի մարդ, առանց ցեղի և կրօնի խտրութեան, որ գտնուած է նոյն զինուորական շրջանում և որ կը համակերպի այդ պահանջներին, պիտի կարողանայ զինուորագրուել յիշեալ գնդերում:

Ռազմափորձի կամ զօրաշարժի առիթով հաւաքուած այդ զօրագնդերը պիտի ենթարկուեն

կարգապահական նոյն կանոններին, ինչ որ գործադրուում են կանոնաւոր պօրագնդերի համար:

Վիլայէթների ընդհանուր խորհուրդների իրաւասութիւնը ստուգուած է մարտի 19-ին 1329 (1913) թուի օրէնքի սկզբունքների համաձայն:

Վերջնական աշխարհագիրը, որ պիտի ձեռնարկուի ընդհանուր վերատեսուչների հսկողութեան տակ ամենակարճ ժամանակամիջոցում «կարեւորքեան տանձակներում չպիտի մի տարուց անցնի, պէտք է վերականգնի երկու հատուածների տարբեր դաւանանքների, ազգութիւնների և լեզուների ճշգրիտ համեմատական չափը: Մինչ այդ Վանի և Իթիւիսի կօմիտէների (էնջումէն) և Ընդհանուր Խորհուրդների ընտրեալ անդամները պիտի լինին կիսովի՝ մուսուլմաններ և ոչ մուսուլմաններ: Էրզուրումի վիլայէթում, եթէ վերջնական աշխարհագիրը չկազմուի մի տարուայ ժամանակամիջոցում, Ընդհանուր Խորհրդի անդամները նոյնպէս պիտի ընտրուեն հաւասարութեան հիմունքով, ինչպէս վերոյիշեալ երկու վիլայէթներում: Սըվազի, Խարբերդի և Դիարբեքիւրի վիլայէթներում Ընդհանուր Խորհրդի անդամներ այժմեանից պիտի ընտրուին համեմատութեան սկզբունքի հիմունքով: Դրա համար, մինչև վերջնական աշխարհագիրը, ընտրող մուսուլմանների թիւը պիտի որո-

շուի վերջին ընտրութեան հիւժք ծառայող ցուցակների համաձայն, իսկ ոչ մուսուլմանների թիւը պիտի նշանակուի այն ցուցակներով, որոնք կը ներկայացուեն իրենց հասարակութիւններից: Բայց եթէ նիւթական գժուարութիւններն այս ժամանակաւոր ընտրողական սխառեմը դարձնեն անգործնական, Ընդհանուր Վերատեսուչները իրաւունք ունին առաջադրել երեք վիլայէթների՝ Սըվազի, Խարբերդի Ընդհանուր Խորհուրդների աթոռների բաշխման համար մի այլ համեմատական չափ, որը աւելի է համապատասխանում նոյն վիլայէթների ներկայ կարիքներին և պայմաններին:

Այն բոլոր նահանգներում, որտեղ Ընդհանուր Խորհուրդները պիտի ընտրուեն համեմատական սկզբունքի հիմունքով, փոքրամասնութիւնը պիտի ներկայացուցիչ ունենայ կօմիտէի մէջ (էնջումէն): «Երբ ընդհանուր վերատեսուչները չեն տեսնում արգելադրանք, պիտի գործադրուի հաւասարութեան սկզբունք մուսուլմանների և ոչ մուսուլմանների մէջ երկու հատուածների ուստիկանական և ժանդարմէրիական գինուորագրման նկատմամբ այն չափով, ինչ չափով որ պաշտօնատեղերը կը թափուրանան:

Երկու հատուածներով հաւասարութեան նոյն սկզբունքը պիտի գործադրուի, «որչպիսի

հնարաւոր է» բոլոր միւս հանրային պաշտօնէութեանց բաշխման ժամանակ»<sup>1)</sup>։

ԼԳ.

Այս դաշինքի հրատարակութիւնը՝ տարբեր ազդեցութիւն գործեց հայկական, նոյնիսկ օտարազգի, շրջանների վրայ։ Բայց մենք առայժմ դրանց մի կողմ թողած՝ տեսնենք թէ այդ դաշինքի մասին ինչ կարծիք ունի դաշն կողմ մի կողմը՝ սուսական զիպլոմատիան։

Դաշինքին ստորագրող Կոստանդին Գուլգեփչը, — Պօլսոյ ոսուսական գործերի հաւատարմատարը, — 1914 թ. յունվարի 27-ին, այն է՝ դաշինքի ստորագրման հետևեալ օրը, Արտաքին գործերի մինիստրին ուղարկած ընդարձակ հեհեռագրումը, ի միջի այլոց, գրում է թէ՛ 1914 թ. յունվարի 26-ի դաշինքով՝ «Հայերի թիւրքերի լծից ազատելու առաջին քայլն է արուած այս օրուանից»։ Որ այս դաշինքով՝ «ընդգծուած

1) «Արարատ» 1914 մարտ. Այս դաշինքի ֆրանսէրն բնագիրը և ուսերէն թարգմանութիւնը տպուած է «Реформы въ Арменіи»-ի եր. 157—164 № 147. Նոյնպէս և «Будущее устройство Арменіи»-ի մէջ եր. 75 գլ. IV. «Մշակ»-ն (1914 № № 25 և 50)՝ և «Հորիզոն»-ն (1914 № 26 և 35) նոյնպէս տպած են այս դաշինքի. և նրանց թարգմանութիւնը աւելի պարզ է «Արարատ»-ի թարգմանութիւնից։

է Ռուսիայի ղեկավարող ղերը հայկական հարցում, և վերահաստատուած է ս. Ստեֆանօյի դաշինքի 16-րդ յօդուածը»։

Որ «այս պարագան, ի հարկէ, շատ բարերար ազդեցութիւն կը գործէ Ռուսիայի միջազգային պրեստիժի վրայ և նրա Ինքնակալի անունը Մերձաւոր Արևելքի քրիստոնեաների սրտերում նորան զմայլունքների զգացումներ կը զարթեցնէ»<sup>1)</sup>։

Որ «յունվարի 26-ի ակտը (դաշինքը) անազին նշանակութիւն ունի հայ ազգի հեռաւոր պատմական վիճակի վրայ 2)։

Որ այս դաշինքը կարող է «ժառանկաւորապէս» գոհացնել Անատոլիայի հայ ազգաբնակութեան 3)։

ԼԵ.

Մի եւրոպացի հրապարակախօսի կարծիքով «պէտք չէ, որ հայոց բարեկամները «ցնորքներ» ստեղծեն։ Որոշուած ծրագրի գործադրումն, հաւանօրէն կը հանդիպի «մեծ դժուարութիւններ»<sup>4)</sup>։

1) Буд. устр. Арм. եր. 87.  
2) Նոյնը, եր. 84.  
3) Նոյնը, եր. 81.  
4) «Արարատ» 1914 մարտ, եր. 235.

Որ այս դաշինքով՝ «Տաճկաստանի տեսա-  
կան քաժանութիւններին մէջ, համա-  
րեա թէ մի կատարուած գործ է» 1):

Որ «ինչ վերաբերում է ուսուցերմանական  
համաձայնութիւններին, նրանք ամենից շուս  
են կատարուել և «նրանք են բացել բաժանման  
քաղաքականութեան» ձանապարհը» 2):

Որ «ինչ պետութիւններ իրենց ամբողջ խը-  
նամքը թափում են այն բանի վրայ, որ հայկա-  
կան բարենորոգումների հասարակական ապա-  
հովութիւնն ու կոնարուը աւելի «երկոյրքակաւ  
լինի, քան թէ իրական»:

Որ «այդ նախագիծը կազմուել է թերի և  
վտանգաւոր պայմաններում. որ ամբողջ գործը  
օժտուած է պակասութեամբ և որ Եւրոպան հե-  
տապնդում է արևելքում «աւելի շատ դիտա-  
ւորեալ խայխայմակ, քան թէ վերակազմութեան  
կամ բարւոքման» 3):

ԼԶ.

«Հորիզոն»-ը իր մի առաջնորդողը 4) այսպէս

1) Նոյնը.

2) Նոյնը, եր. 236.

3) Նոյնը, եր. № 237.

4) «Հայկական խնդիր» № 27.

է վերջացնում. «Հայկական Բարենորոգումների  
ծրագիրը պարունակում է և՛ բացանական, և՛  
դրական կէտեր: Չուզադրելով այդ կէտերը և  
հաշուի առնելով մի կողմից մեր ակնկալութիւն-  
ները Հայոց հարցի ներկայ Փաղից, և միւս կող-  
մից տաճկահայ իրականութիւնը՝ մենք գալիս  
ենք այն վերջնական եզրակացութեան, որ ըն-  
դունուած ծրագիրը՝ «եթէ իրագործուի էլ, չի  
լինիլ Հայոց հարցի լուծումը»: «Սակայն նա կա-  
րող է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք  
անխուսափելիօրէն և ոչ հեռուոր ապագայում  
կը տանեն դէպի այդ լուծումը»:

Վերջին բառերով «Հորիզոն»-ը գրեթէ նոյնն  
է ասում, ինչ-որ Պօլսոյ ուսաց գեսպանատան  
ներկայացուցիչ Կոստանդին Գուլգեվիչը: Թէև  
միաժամանակ «Հորիզոն»-ը չի ժխտում, որ «այդ  
ծրագիրը ստեղծում է մեզ համար «մի վերին  
աստիճանի անհաստատ դրութիւն» 1):

«Հորիզոն»-ի թղթակից Ա. Վոսմեանը մի  
շարք յօդուածներով 2) «ուրուագծել է հեռան-  
կարը այն հնարաւորութիւններուն և պատեհու-  
թիւններուն, զորս գտած է յունվարի 25-ին  
համաձայնագրին մէջ» 3): Եւ երբ Պօլսոյ յո-

1) Նոյնը 1914 № 35.

2) Նոյնը № № 125 147.

3) Նոյնը № 145.

ուեսանները հաւանութիւն չեն տուել նրա լաւատեսութեանը, Վրամեանը նրանց պատասխանել է այսպէս՝ «յոռետեսութիւնը զոր կը դիտենք Պօլսոյ մէջ՝ իբրև ուսումնասիրութեան մը խտացումը չէ: Ամբոխային մտայնութիւնն է ան՝ թուցիկ տպաւորութիւններու արդիւնք, Պօլսեցի հայը իսպառ տգէտ է հայ իրականութեան մասին» <sup>1)</sup>:

Վերաբերութեամբ իրան՝ Վրամեանը ասում է, որ ինքը «ոչ լաւատես է, ոչ էլ յեռատես, այլ իրատես» <sup>2)</sup>:

ԼԷ.

«Մշակ»-ի թղթակիցներից մէկը՝ Ա. Մարտունի Մոսկուայից գրում է թէ՛ «Հայկական րեֆորմների նախագիծը ոչ մի պատասխան չէ տալիս այն «անիծեալ հարցին», որի անունն է թիւրքահայ խնդիր» <sup>3)</sup>:

Իսկ թերթի աշխատակից Սօֆիա Դանիէլբէկ չափազանց լաւատես է:

Յարգելի տիկնոջ Ողջոյն թիւրքայերին» վերնագրով յօդուածը վերջանում է հետևեալ զգա-

1) Նոյնը № 146.

2) Նոյնը № 147.

3) «Մշակ» 1914 № 28.

ցուած բառերով՝ «Ողջոյն ձեզ, բազմաչարաչար, բազմատանջ եղբայրներ, ձեր տասնեակ տարիների տանջանքները, ձեր թափուած արիւնը, ձեր հաւատը դէպի լոյս ապագան՝ այսօր պսակուած է յաջողութեամբ: Ձեր սիրած հայրենիքի, ձեր վաթանի արեւն է ծագում: Բնւ է որքան տանջուեցիք որքան արիւն թափեցիք, այժմ դէպի «խաղաղ, հանգիստ, ստեղծագործական» աշխատանք <sup>1)</sup>:

«Եւ ամեն կողմից,—Րաֆֆիի հետ երգում է տիկինը, պանդուխտ հայազգիք, դիմեն դէպ իրանց սիրուն հայրենիք» <sup>2)</sup>:

«Մշակ»-ի միւս աշխատակից թէ թղթակից Լևոն Մկրտիչեանի (Մկրտչեան) լաւատեսութիւնը մինչև ոգևորութեան է հասնում, վասնզի պարոնը գրում է՝ «կան միամիտ հայեր, որոնք տակաւին չեն հաւատ ընծայեր հայկական բերեսորոգմանց գործադրութեանը»:

— «Ձէ, այլևս իրաւունք չունինք,—բացականչում է պարոնը,—կասկած արտայայտելու: Բարենորոգմունք այս անգամ «անվրէպ պիտի

1) Միլիւկովը ևս Մոսկվայում իր դասախօսութիւնը այսպէս վերջացրեց՝ «Այժմ Արագած լեռան կանթեղները վաւուած են աւելի պարզ և ցոյց են տալիս դէպի հիւսիս» «Մշակ» 1914 № 631:  
2) «Մշակ» 1914 № 33.

գործադրուին,» զի այդպէս կը պահանջէ Ռուսիոյ գերագոյն և ամենագոր. կամքը» <sup>1)</sup>։

«Մշակ»-ի Ալէքսանդրիայի այս թղթակիցը իր ոգևորութեան մէջ այնքան առաջ է գնում, որ իրան հետ համակարծիք չեղողներին՝ առանց այլևայլութեան ոճրագործ է անուումանում, պընգելով որ «մեր ցեղին ամենէն յիմարներն անգամ այդ ոճիրը չպիտի գործեն՝ ընդհանուր անձնաւորութեան մեր միահաղոյն զգացումներուն մէջ աններգաշնակ նօթ մը դնելու, զի հակառակ պարագային՝ «համայն հայութիւնը պիտի ջախջախէ, պիտի անիծէ և պիտի պատժէ ատանկ յիմարները» եթէ գտնուին» <sup>2)</sup>։

Գալով «Մշակ»-ի իրան՝ նա իր աշխատակիցների չափ լաւատես չէ թէև, բայց շատ յոսեատես էլ չէ։ Համբ. Առաքելեանը գտնում է, որ ոուս և թիւրք կառավարութիւնների մէջ համաձայնութեան կնքումը «գործի վաղձանի սկիզբն է», որ «այնուամենայնիւ կը տայ թիւրքիայի բազմաշարաշար հայ ժողովուրդին ապրելու, զարգանալու ապահովութիւն, «եթէ բարեխղճօրէն գործադրուի» <sup>3)</sup>։

Վեհափառ Հայրապետի ներկայացուցիչ Պօ-

1) «Մշակ» 1914 № 34.

2) «Մշակ» 1914 № 34.

3) «Նոյնը» № 27.

ղոս փաշայ Նուպարը, որի գործունէութեան արդիւնքը պէտք է համարուի յունուարի 26-ի ակտը, նոյնպէս լաւատես է և յունուարի 26-ին Փարիզից Վեհափառ Կաթողիկոսին հեռագրում է, որ «մեր Ասիական թիւրքիայի եղբայրներն այսուհետև հնարաւորութիւն կունենան ապրելու արդարադատ և ապահով վարչութեան ներքոյ» <sup>1)</sup>։

ԼԸ.

Մինչդեռ լրագրական ասպարեզում այսպիսի թեր և դէմ կարծիքներ ու խորհրդածութիւններ էին տեղի ունենում յունուարի 29-ի ակտի մասին, և մինչդեռ «Եւրոպական դիպլոմատիան դեռ ոչ մի կերպ չէր կարողացել հայկական վիլայէթների ընդհանուր վերատեսուհների թեկնածուների ընտրութեան հարցը լուծել, — արդէն այդ երկրի վայրենի և լեռնային անկիւններից լսուեցին յուզիչ և վատ տեղեկութիւններ» <sup>2)</sup>։

Չափերանների մէջ առաժս այս տողերը Օլգենինի խօսքերն են, որ «Մշակ»-ը հանել է «Рус. Слово» լրագրից, որին իբրև թղթակից՝ Օլգենինը, այդ միջոցներում, ճանապարհորդել էր Տաճկահայաստանում, ուսումնասիրել էր

1) «Արարատ» 1614 փետր. եր. 121.

2) «Մշակ» 1914 № 75.

երկրի և նրանում ապրող ազգերի դրուժիւնը, քրդական այլ և այլ ցեղերի պատկերներն էր լուսանկարել և Թիֆլիզ ու Բագու վեռադառնալով՝ «Անհետացող Հայաստան» վերնագրով մի մի դասախօսութիւն էր կարդացել: Օլգենին շատ լաւ ընդունեցին մանաւանդ Թիֆլիզում, ուր «Մշակ»-ի խմբագրութիւնը ի պատիւ նրա մի թեթև բանկէտ էլ սարքեց <sup>1)</sup>:

Օլգենին յիշած «յուզիչ և վատ տեղեկութիւնները» ոչ այլ ինչ են, ընթերցող, բայց եթէ քրդական ապստամբութիւնը, սր յունուարի 26-ի ակտից քիչ անց՝ յանկարծ փրթաւ Տաճկա-Հայաստանում:

Այդ ապստամբութեան ծագման պատմութեամբն ու մանրամասնութեամբը՝ լիքն են հայ և օսարագգի թերթերը, որոնք երկու միմեանց հակառակ եզրակացութեան են յանգում:

ԼԹ.

Ռուսական և ուսասէր թերթերը պնդում են, որ քրդական ապստամբութիւնն ու շարժումները ուղղուած են հայերի դէմ, որ «Մէյիզ

1) Օլգենինից յետոյ՝ Թիֆլիզ և Բագու եկաւ պրօֆ. Բլէտնեովը և նոյնպէս դասախօսեց նոյն նիւթի մասին:

Ալի շէյխը կազմակերպում է Չարդերի ծրագիր», որ դրա համար հայերը մեծ երկիւղի ու տագնապի մէջ են գտնուում:

Մինչև անգամ Օլգենինը իր յօդուածում թարգմանաբար դուրս է բերել Տաճկա-Հայաստանի «տեղական քնակիչներէից մէկից» իր ստացած նամակը, ուր մանրամասնաբար նշարագրուած են հայերին Չարդելու ծրագիրը <sup>1)</sup>:

«Տեղական բնակիչների մէկի» այդ նամակով՝ Օլգենինը, — «Անհետացող Հայաստանի» այդ սրտացաւ մեռացողը, — գալիս է հերքելու թիւրք կառավարութեան լրագիրներէ հրատարակած այն տեղեկութիւնները թէ՛ «Բիթլիսեան տխրալի իրարանցման մեղաւորները հանդիսանում են ոչ թէ քրդերը, այլ կողմնակի մարդիկ, ինչպէս օրինակ, Կ. Պօլսից Բիթլիս փախած Մահմուտ Շէֆքէթ փաշային սպանող Սավֆէթ բէյը. և գլխաւորապէս մի քանի շէյխէր ու բէգեր, որոնք «հրահանգներ, զէնք և փող են ստանում զըրսից», — (պարզ ակնարկ Ռուսաստանի վրայ, — գրում է Օլգենինը):

Որ Տաճկա-Հայաստանում «լիակատար հանգստութեան մասին խօսք լինել չի կարող մինչև այն ժամանակ, քանի Րըզակը և նրա գործակիցները հնարաւորութիւն կունենան ոռոտաց

1) «Մշակ» 1914 № 75.

հոյաճանադրութեանը շարունակել իրենց նետակազերը Թիւրքիայի դէմ Պարսկաստանից» <sup>1)</sup>։

Կայ և մի ուրիշ քիւրդ գործիչ Սըմկօ անունով.....

Խ.

Քիւրդերի մէջ ծագած այս խլրտումներից անաբեկուած՝ հայերը դիմեցին Բիթլիսի ոռւսաց հիւպատոս Շիրկովի պաշտպանութեանը, բայց նա շատ սառը վերաբերուեցաւ. իր «տան դռները փակեց հայերի առաջ» <sup>2)</sup>, յայտարարելով, որ քրդերի մասին նրանց լսածը՝ «իտողոցային բարբառանք է»։ Սակայն բանից դուրս եկաւ, որ Շիրկովը կամ սխալուում է, կամ,—որ աւելի ճիշտն է,—բուն իրողութիւնը թագցնում է,—որովհետեւ երբ Բ. Գուռը զինուորական ոյժ գործադրեց ապստամբ քրդերի ղեկավարներիցն ձերբակալելու, և ոմանց ձերբակալեց, նրանց «պարագլուխ Մօլլա Սէլիմը՝ տասներեք բէգերի հետ՝ ապաստան գտաւ «ոռւսաց հիւպատոսարանում», իսկ հիւպատոս Շիրկովը նրան «առաւ ոռւսական դրօշակի պաշտպանութեան տակ» <sup>3)</sup>։

Իսկ «երբ մեծ վեզիրը պահանջեց ոռւսաց

1) «Մշակ» 1914 № 76.

2) Նոյնը.

3) «Մշակ» 1914 № 69 և № 80.

ղեսպանից յանձնել Թիւրքաց կառավարութեան ձեռքը Բիթլիսի քիւրդական ապստամբութեան պարագլուխ Մօլլա Սէլիմին և նրա ընկերներին՝ ղեսպան Գիրսը առարկեց, որ քիւրդերի շարժումը «քաղաքական բնուորութիւն է», հետեւաբար և ապաստանած քիւրդերը «չեն կարող յանձնուել» <sup>1)</sup>։ Որովհետեւ Բ. Գուռը զիտէր, որ Ռուսաստանը քաղաքական յանցաւորներին պաշտպանութիւն տուող կառավարութիւնների շարքի մէջ չի մտնում, ուստի երկար բանակցութիւններից յետոյ՝ յաջողեցաւ բռնել և Բաղէշում կախել տասներեք քիւրդ շէյխեր, պէյեր և աշիրապետներ <sup>2)</sup>։

ԽԱ.

«Բիթլիսի դէպքից անմիջապէս յետոյ,— գրում է «Մշակ»-ի Սամարղանդի թղթակից Ա. Յ. Մուրադեանը,— արտասահմանեան մամուլի մէջ լուրեր երևացին այն մասին. թէ քրդական շարժումները ղեկավարուում են Ռուսաստանի ձեռքով։ Ճիշտ է լուրերը գերմանական աղբիւրից էին բղխում՝ սակայն Բիթլիսի ոռւսական հիւպատոսարանում ոռւսական դրօշակի տակ ա-

1) Նոյնը № 71.

2) Նոյնը, № 96.

պատան շնորհելը՝ բաւական լուրջ ապացոյցներ են լուրերի ճշմարտութեանը» <sup>1)</sup>։

Լրագրական այս տեղեկութիւններէց առաջ էր, որ «Թիւրքաց կառավարութիւնը յայտարարել էր, որ քիւրդերի ապստամբութիւնը, իբրև բէակցիօնական շարժում, սւղղուած է իր դէմ, այլ ոչ հայերի, և թելադրուած է դրացի մի պետութեան կողմից» <sup>2)</sup>։

Թիւրք կառավարութեան այս յայտարարութեան ճշմարտութիւնը միաբերան վկայում է ազգիս Վեհափառ Հայրապետի առաջ նաև Պօլսոյ պատրիարք սրբազան Զտւէնը և Բիթլիսի առաջնորդ Ռուբէն ծայրագոյն վարդապետը։

Զաւէն սրբազանի զեկուցագրում, ի միջի այլոց, կարդում ենք հետևեալ տողերը՝... «հարկ է աւելացնել թէ Մօլլա Սէլիմ քաղաքին յարձակման միջոցին յատուկ գիր ձև ուղղելով Առաջնորդին փստահացուցած է զինքը թէ հայերուն որևէ վնաս չպիտի հասնի, փասնզի հայերուն հետ խնդիր չկայ, այլ կառավարութեան հետ է խնդիրը։ Եւ արդարև,—շարունակում է Պօլսոյ պատրիարքը,—քրդական այս շարժումը ուղղակի կառավարութեան դէմ պատրաստուած ցոյց մըն էր, որուն նպատակն էր կարգ ձև պա-

1) «Մշակ» 1912 № 98.

2) Նոյնը. № 77.

հանջներ ընդունել տալ կառավարութեանը» <sup>1)</sup>։

Բայց ինչպէս վերևում յիշել եմ, Թիւրք կառավարութիւնը քրդական այս շարժումը խեղդեց ժամանակին պարագլուխներին Բաղէշի հրապարակում կախաղանի վրայ բարձրացնելով։

Եւ այսպէսով ապարդիւն անցաւ «Մշակ»-ի այն խորհուրդը, որ տալիս էր ոուս կառավարութեանը՝ «գրաւել Թիւրքաց Հայաստանը» որովհետև,—գրում է Համբ. Առաքելեանը,— «այդ է պահանջում Ռուսաստանի պատիւը, պրեստիժը և քրիստոնէական ու մարդասիրական պարտականութիւնը» <sup>2)</sup>։

ԽԲ.

1914 թ. Յունուարի 26-ի դաշինքից յետոյ՝ Թիւրք կառավարութեան խնդրանօք՝ Լրոպական Մեծ պետութիւնները երկու թեկնածուներ ընտրեցին Անատոլիայի երկու մասերի ընդհանուր վերատեսչութեան պաշտօնի համար, սակայն, ինչ ինչ պատճառաբանութիւններով, դրանք չկամեցան յիշեալ պաշտօնն ստանձնել։ Այնուհետև ոուս դիւանագիտութիւնն առարկեց, որ «ընդհանուր վերատեսուչներ չպաշտօնների թեկնածուները պէտք է ընտրուեն և առաջարկ-

1) «Արարատ» ապրիլ, էր. 325.

2) «Մշակ» 1914 № 65.

ուեն միւս պետութիւններին «միմիայն Ռուսի-  
այի կողմից <sup>1)</sup>»:

Բայց այս առարկութիւնը անհիմն և անտե-  
ղի նկատուելով՝ չընդունուեցաւ: Ուստի բոլոր  
Մեծ պետութիւնների կողմից ընտրուեցան և Բ.  
Դրան կողմից հաստատուեցան Հոլանդացի Վես-  
տենիկ գնդապետը և Նորվեգացի լէյտենանդ  
Նիկօլս Հօֆը՝ առաջինը ուսական ազդեցութեան  
շրջանի համար, երկրորդը՝ գերմանական:

Այնուհետև այս երկու պետութիւնները,  
նամանաւանդ առաջինը, այն է՝ Ռուսաստանը  
աճապարեց, որքան կարելի է, վաղընդփոյթ են-  
թարկել իր ազդեցութեանը իրան բաժին ընկած  
ու հաստատուած վերատեսուչ կամ, ըստ Վուա-  
մեանի, մարզպանը, դեռ տեղ չհասած, դեռ իր  
պաշտօնին չձեռնարկած՝ ուսս դիպլոմատիան  
ուզեց անտեսապէս ներգործել տեղական հայերի  
վրայ, և սրանց նիւթական դրութիւնը բարձրաց-  
նելու պահանջներով մրցել Օսմանեան կառա-  
վարութեան հիմնած հողային բանկայի հետ և  
նրան տապալելով՝ ամեն բան իր ձեռքն առնել:

Եւ իր այդ քաղաքական ձեռնարկութիւնը,  
ինչպէս միշտ և ամեն մի դէպքում, նոյնպէս և  
ներկայ դէպքում, Ռուսաստանը սկսեց իրագոր-  
ծել հայերի իրանց ձեռքով և իրենց դրամով:

1) «Հորիզոն» 1814 № 58.

ԽԳ.

Թիւրքաց հողային բանկի կողքին՝ նոյնպիսի  
բանակ հիմնելու միտքը պատկանում է վերոյի-  
շեալ Օլգենիսին <sup>1)</sup>, որ նա արժարձեց Թիֆլի-  
զում և Բագում կարգացած դասախօսութիւն-  
ներում և «Русское Слово»-ում տպուած մի  
շարք թղթակցութիւններում:

Առանց քննելու և վերլուծելու ուսս թղթ-  
թակցի առաջարկի էութեան ու նպատակը՝ հայ  
մամուլը ամբողջապէս, — նրա շարքում նաև պաշ-  
տօնական «Արարատ»-ը <sup>2)</sup>, գլխովին փարեցաւ  
այդ առաջարկին և սկսեց ժողովրդի մէջ մեծ  
եռանդով արժարձել:

Մամուլի արժարձումով չբաւականանալով՝  
«Թիֆլիզ էին եկել Մոսկուայից մեր անուանի  
անտեսագէտ պ. Տոմսեանը և պրօֆեսոր պ.  
Ջիվիլիեկեանը՝ Մոսկուայի, Թիֆլիզի և Բագուի  
հայերի մէջ իրականացնելու դրամատան կարե-  
ւոր խնդիրը Տաճկա-Հայաստանում» <sup>3)</sup>:

1) «Մշակ» 1914 № 45.

2) «Արարատ» 1914 ապրիլ և մայիս, եր. 300 և

421.

3) Նոյնը, եր. 421.

Բացի այդ պարոններէց լոյս ընկաւ նաև «Մատթէոս Խերեան ռուսահայտակ և Եգիպտոսի Ալէքսանդրիա քաղաքում ծխախոտի վաճառականութեամբ զբաղուող յարգելի պարոնը, զրում է «Արարատ»-ը՝ որ առաջարկում էր «Երկրագործական բանքան թիւրքական ոտնձգութիւններէ ազատ պահելու համար՝ «ռուսական հիմնարկութիւն մը ընել» զայն, ի հարկին ռուս կառավարութեան պաշտպանութիւնը վայելել կարենալու համար»։ «Այս նպատակին համար, — շարունակում է Խերեանը իր խորհուրդները տալ Վեհափառ Կաթողիկոսին, — ներս կանոնին մի քանի ռուսահայ զրամատէրեր և կենդրոնի, ինչպէս նաև գաւառներու տնօրէններ կընտրուին ռուսահայտակ անձնակորութիւններէ» <sup>1)</sup>։

ԽԴ.

Նորին Օծութիւն ազգիս Վեհափառ Կաթողիկոսը ևս ձայնակցեց մամուլին և հայրապետական կոնգրակներով պատուիրեց ազգային եկեղեցական-ծխական հոգաբարձութիւններին, բարեգործական և կուլտուրական ընկերութիւններին, <sup>2)</sup> որպէսզի «գիտակից անդամք ազգիս,

1) Նոյնը, եր. 422.

2) Եւ և Պօլտոյ Պատրիարքին, այնտեղի հայերի և ազգային մարմիններին և Եգիպտոսի, Ամերիկայի և Ռուսաստանի գլխաւոր քաղաքների հայ մարմիններին.

բարեգործական կրթական հաստատութիւնք ամենայն կողմանց Հայոց միախորհուրդ և միակամ լեալ, կատարեսցեն յայսմ պատմական վայրկեանի զազգային-բարոյական զպարտիս իւրեանց ամենայն անկեղծութեամբ, եռանդեամբ և հեռատեսութեամբ, զօրացուցանելով և կազմակերպելով զկրթական բարոյական և զտնտեսական-կալուածական վիճակ հայ ժողովրդեան ի Հայաստան Աշխարհի։

Ապա Վեհափառ Հայրապետը երեք պատուէր է տալիս վերոյիշեալ հիմնարկութիւնների ղեկավարներին։

«Առաջին՝ առանց յապաղման տալ կազմակերպել զմեծ գործ ազգային զրթութեան, դնելով զայն ի վերայ հաստատուն և կանոնաւոր հիմանց, բազմացուցանել զտարրական և զմիջնակարգ դպրոցս՝ արհեստագիտական, երկրագործական և առևտրական մասնաճիւղովք»։

«Երկրորդ՝ փութով հիմնել և կազմակերպել ի ձեռն հայ զրամատեարց ի Տաճկա-Հայաստանի զվստահելի դրամատուն (բանկ), վասն տրնտեսական ազատագրութեան, բազմացման սեպական կալուածոց հայ ժողովրդեան և վասն բարգաւաճման Հայաստան Աշխարհի»։ Եւ «Երրորդ՝ փութով կազմակերպել ամենայն զգուշութեամբ և առանց աղմկի զմասնաժողովս վասն դիւրացուցանելոյ զվերադարձ գաղթականաց

Հայոց յամենայն կողմանց ի հայաբնակ նահանգս Տաճկաստանի»<sup>1)</sup>։

ԽԵ.

Ինչպէս որ պէտք էր սպասել՝ տաճիկ կառավարութեան պաշտօնեաները, — մայիսի 4-ին գրում էր Հայրապետական Դիւանը վերևում յիշուած ազգային հիմնարկութեան ղեկավարներին, — առանձնապէս հետևում են հայերի գործունէութեան եզանակին և ծրագրին, որն արտայայտում է յաճախ ազգային թերթերում... «Ի նկատի ունենալով, որ բարենորոգումների իրագործումը դեռ չի սկսուել Հայաստանում և որ տաճիկ կառավարութիւնն իր աւանդական քաղաքականութեան համաձայն կարող է չնախատեսուած արգելքներ յարուցանել և մինչ իսկ գաղտնի դժուարութիւններ ստեղծել հայերի ներգաղթին և ուժեղացման դէմ հայկական նահանգներում, — Վեհափառ Հայրապետի պատուէրով Դիւանս խնդրում է ձեզ աշխատել, որ Նորին Վեհափառութեան ապրիլ 28 թուակիր Հայրապետական կոնդակով յանձնարարուած խնդիրների ու կարևոր հարցերի մասին խորհրդակցութեան արգիւնքն ու հետևանքները յսպագործիս

1) Այս կոնդակը գրուած է 1814 թ. ապրիլի 28-ին.

թերթերի մէջ, ինչպէս և Հայրապետական կոնդակը պահել առանձին։

Ինչպէս երևում է այս հրահանգը Նորին Օծութեանը տրուած է եղել կառավարչական բարձր շրջաններից. վասնզի վերոյիշեալ տողերից յետոյ՝ Դիւանը մէջ է բերում մի «յայտնի դիւանագէտի հետևեալ կարծիքը».

— «Ամեն բանից առաջ անհրաժեշտ է, զըրել է ուսս դիւանագէտը, — որ հայերը գործեն առանց լրագրական և այլ ամեն տեսակ աղմուկների, օրինակ՝ միտախնդ, դասախօսութիւն և այլն։ Որովհետև անելիք գործի մասին տարածուած լուրը՝ հէնց գործի սկզբումը թիւրքերի մէջ կասկած կը յարուցանէ և ընդդիմադրութեան առիթ կը տայ մեզ։ Այս դէպքում Կ. Պօլսոյ ուսս դիւանագիւութեան հանդէպ՝ արուեստական խոչընդոտներ առաջ գալով՝ մեծ չափով դժուարացնում են նրա գործունէութիւնը»։

«Ռուսահայերն ու տաճկահայերը, — շարունակում է ուսս «յայտնի դիւանագէտը», — համերաշխ աշխատանքով իրենց ազգային քաղաքակրթական գործը պէտք է առաջ տանեն հիմնելով դպրոցներ և առհասարակ կրթական հիմնարկութիւններ։ Իրանցից կախուած ամեն միջոց նրանք պէտք է ի գործ դնեն՝ Հայաստանում գիւղատնտեսութիւնը զարգացնելու, հողա-

յին հարցը կարգաւորելու և առևտուրն ու արհեստներն այնտեղ ծաղկեցնելու: Հայերը պէտք է շատ մեծ եռանդով կռուեն արտագաղթը խաբանելու և, ընդհակառակը, միջոցներ, գտնեն գաղթականներին յետ դարձնելու իրենց հայրենիքը: Պէտք է առաջ քաշել և խրախուսել իրենց ազգին համար աշխատելու և զոհուելու ընդունակ հայերին»: «Հայերը այժմ ոչ միայն Ռուսաստանի, այլ նաև ամբողջ Եւրոպային ցոյց պիտի տան, որ նրանք քաղաքականօրէն հասունացած ազգ են և ընդունակ ինքնուրոյն կեանքով պարելու, իրենց քաղաքակրթութիւնը դարգացնելու և եւրոպական կուլտուրան Ասիայում տարածելու: Եւ հայերի համար՝ պատմական նըշանաւոր ժամանակը, մոմենտը այժմ է:

«Փոխատու և հողային բանակների հիմնաւորման համար, որ այժմ այնքան կարևոր է, հայերը լի ու լի աջակցութիւն կը ստանան Ռուսաստանից»:—Ռուսաստանը ամեն կերպով կը պահպանէ հայերի բանկային հիմնարկութիւնը, և, ի հարկէ, այլևս չի թոյլ տալ, որ պատահարների հանդիպի մի այդպիսի հիմնարկութիւն: Այս կէտում հայերը բնաւ չեն կարող որևէ կասկած կամ տարակոյս ունենալ»:

ԽԶ.

Վեհափառ Կաթողիկոսի հետ միաժամանակ,

—այն է 1914 թ. Ապրիլի վերջերին,—և միատեսակ՝ Պօղոս փաշա Նուպար մի յայտարարութիւն հրատարակեց Եգիպտոսում իր հիմնած «Հայոց Բարեգործական ընդհանուր Միութեան» ծրագրի մէջ ինչ ինչ փոփոխութիւն մտցնելու համար:

— «Բնական է,—գրում է փաշան,—որ Միութիւնը պարտաւոր պիտի ըլլայ հանգամանքներուն պաշաճել և իր բարեգործութեան եղանակը բարեփոխել՝ նոր կացութենէ մը յառաջ եկած նոր պահանջներուն համապատասխանելու համար: Տարակոյս չի կայ, օրինակի համար, որ ապահովութեան վերահաստատումովը, հողագործութիւնը նոր թռիչք մը պիտի առնէ, եթէ զիւղացիները, մանաւանդ սկզբները, անհրաժեշտ խրախուսանքները գտնեն: Միութեան օժանդակութիւնը անոնց համար շատ օգտակար պիտի կրնայ ըլլալ՝ ըլլայ անոնց հող, եզ, սերմնացու և երկրագործական գործիքներ հայթհայթելով, ըլլայ զիւրացնելով սէնտիքաներու (syndicats), համագործակցականներու (cooperatives) և հողագործական վարկի զրամատուններու (caisses de credit agricoles): Նոյնպէս միութիւնը կոչուած է աւելի ևս ընդարձակելու իր մասնակցութիւնը դպրոցական ձեռնարկներու մէջ, որ բարենորոգմանց ծրագրին մէջ մասնաւոր յօդուածին համաձայն, պիտի կրնան դարդանալ, առանց ենթարկուելու անցեալին խոչընդոտներուն»:

— «Մեր ընկերակցութեան յառաջիկայ գործունէութեան այս տեսակէտները, — շարունակում է Պօղոս փաշան, — իբրև օրինակ կը յիշատակենք, կասկած չի կայ որ «տակաւին ուրիշ ձեռնարկներ ալ կան,» որոց հանդէպ Միութիւնը նոյնքան օգտակարութեամբ պիտի կրնայ գործել»: ... «Սակայն այսքան ընդարձակ ծրագիր մը պէտք պիտի ունենայ հասոյթներու, զոր Միութիւնը այսօր չունի: Ձեռք յուսար թէ կարելի պիտի ըլլայ իր գործունէութիւնը ընդարձակել և ազգօգուտ գործ մը կատարել, եթէ նորանոր անդամակցութիւններ և նուիրագրութիւններ չընծայուին մեզի, և կրնանք աւելցնել թէ՛ կարևորութիւնը այն օժանդակութեան զոր Միութիւնը ի վիճակի պիտի ըլլայ բերելու յօգուտ բնագաւառի մեր հայրենակիցներուն, մեզի ընծայուելիք օգնութեանց հետ ուղիղ համեմատական պիտի ըլլայ»:

Իր այս յայտարարութեան վերջաբանով Պօղոս փաշա Նուպար յոյս է տածում, որ «Ընդհանուր Միութիւնը միշտ կրնայ ապաւինել հանուր հայութեան համերաշխութեան և անձնուիրութեան, ամեն անգամ որ խնդիրը ազգասիրական գործի մը վրայ է» 1:

1) «Արարատ», 1914, յունիս.

ԽԷ.

Ռուսաց գիւանագիտութեան կողմից Նորին Օծութեան ազգիս Կաթողիկոսին և Նորին Վսեմութեան Պօղոս փաշա Նուպարին ներշնչուած՝ այս շատ օգտակար և քաջալերիչ մտքերն ու ձեռնարկութիւնները տաճկահայութեան անտեսական և մտաւորական վիճակը բարձրացնելու, զարգացնելու գեղեցիկ նպատակաւ, մեզ յիշեցնում է 1878 թուականը, երբ Կ. Պօլսոյ Ներսէս պատրիարքը Բերլինի վեհաժողովի 61 յօդուածի և Կիպրոսի դաշնագրի վրայ հիմնելով՝ համանման մտքեր յայտնեց Ազգային ժողովում արտասանած իր ընդարձակ ճառի մէջ:

Սակայն այն ժամանակեայ և ներկայ ժամանակի մէջ եղած տարբերութիւնն այն է, որ այն ժամանակ Տաճկա-Հայաստանը անտեսապէս և մտաւորապէս պիտի բարգաւաճէր անգլիական դրամազլխի ներմուծմամբ և դառնար մի ինքնավար երկիր ընդ գերիշխանութեամբ Օսմանեան պետութեան, իբրև մի թուփ կամ պատուար ուսական յառաջխաղացման: Իսկ այժմ Տաճկա-Հայաստանը անտեսապէս և մտաւորապէս պիտի բարգաւաճէր հայերից իրանցից, կոպէկ-կոպէկ հանգանակուած դրամազլխով, և վերջ ի վերջո՛, միանար և ձուլուէր ուսական պետութեանը՝ իբրև նրա անբաժան մասը:

Այդպէս էլ եղաւ: Եւ ըստ Պօղոս փառայի, «հանուր հայութիւնից» ընծայաբերուած զբանները՝ նախ քան տաճկահայերի տնտեսական և մտաւորական գործի ծառայելը՝ գոնէ մասամբ, գոնէ ժազի չափ, ամբողջովին ծառայեցին ուսասանայ կամաւորական ռազմիկ խմբերի կազմակերպման գործին, — գործ՝ դէպի որը ես շուտով կը դառնամ:

ԽԸ.

Ռուս ղեկավարութիւնի ջանքով կազմուած Բալկանեան փոքրիկ ազգերի դաշնակցութիւնն ընդդէմ Թիւրքիայի և սրան հասցրած հարւածները: Ապա Աւստրիայի ջանքով յիշեալ դաշնակցութեան քայքայելն և դաշնակիցների միմիանց դէմ զինուելն ու միմեանց բզկտելը, վերջապէս ուսական ղեկավարութիւնի նորանոր ջանքերը՝ մի նոր Բալկանեան դաշնակցութիւն կազմակերպելու՝ այս անգամ արդէն ընդդէմ Աւստրիայի և այն, — այս ամենը պարզ ապացոյց էր, որ եւրոպական միջնորդութեամբ ելեքտրականացած է վառօդի հոսով:

Եւրոպական պետութիւններից՝ Ռուսիան, Ֆրանսիան և Անգլիան մի կողմ կանգնած՝ և Գերմանիան, Աւստրիան ու Իտալիան միւս կողմ՝ ըստ իրարից սպասուած էին միմեանց հետ ընդհարուելու, թէպէտ և նրանց միապետներն

ու քաղաքագէտները միաժամանակ շարունակում էին իրենց բանակցութիւնները գործը խաղաղութեամբ վերջացնելու իբրև թէ:

Երկու կողմի հակառակորդ պետութիւնները ևս՝ ամեն միջոց գործ էին դնում իրանց կողմը գրաւելու եւրոպական ու ասիական այս ու այն փոքրիկ ազգութեանը՝ խոստանալով նրան այս ու այն բարիքը ապագայում:

Մի այդպիսի բարիքի նախագուռն էր համարուում 1914 թ. յունուարի 26-ի դաշինքը Ռուսիոյ և Թիւրքիոյ մէջ Տաճկա-Հայաստանի վերաբերմամբ, որի մի մասը, ինչպէս տեսնուք, ենթարկեց գերմանական ազդեցութեան, իսկ միւս մասը՝ ուսական ի դէմս երկու ընդհանուր վերատեսուհների:

Այդ վերատեսուհները 1914 թ. ապրիլի վերջերին ստանձնեցին իրենց պաշտօնը և իրենց իրաւունքների և ձեռնհասութեան վերաբերեալ 23 յօդուածից բաղկացած հրահանգը՝ Բ. Դրոնից ստանալով՝ մեկնեցան իրենց պաշտօնավայրերը: Բայց նրանք զեռ ոչ մի գործի չէին ձեռնարկել, երբ փրթաւ եւրոպական անեղ պատերազմը: Եւ Տաճկա-Հայաստանի ընդհանուր վերատեսուհները վերադարձան իրենց հայրենիք:

1) «Արարատ» 1914, Օգոստոս.

Թէպէտ պատերազմական բեւը Տաճկա-Հայաստանից տակաւին հեռու էր, բայց մենք արդէն գիտենք, որ ի շնորհս Ռուսիոյ հայ մամուլի այնտեղ, Տաճկա-Հայաստանում ևս սկսուել էին արհեստական ինտրիգներ ու շարժումներ տակաւին 1912 թւականից սկսեալ: Այդ ինտրիգների և շարժումների շնորհիւն էր, որ Տաճկա-Հայաստանի մի մասը ռուսական ազդեցութեանն էր ենթարկուել ի պաշտօնէ:

Ռուսի և եւրոպական պատերազմի նախօրեակին, այն է յունիսի 14—15-ին՝ ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ «վսեմ. Տ. Պօղոս փաշան եղաւ Պետրոգրադում և տեսնուեցաւ արտաքին գործից նախարար Սազոնովի և արևելեան գործերի ղեկավար իշխան Տրուբեցկոյի հետ»<sup>1</sup>, հարկաւ նրանցից որոշ հրահանգ ստանալու համար իր մօտակայ գործունէութեան համար:

ԽԹ.

Սակայն զիպլումատիքական յարաբերութիւնների, կամ խորհուրդների ժամը անց էր կացել: Եւ Պօղոս փաշան չէր, որ այնուհետև կարող էր օգտակար լինել զիպլումատիայի համար, այլ հայ ռազմիկ սյօբը, — այն է «Հայ Յե-

1) «Արարատ», յունիս, եր. 510.

ղափոխական Դաշնակցութիւնը», որի անդամների մեծագոյն մասը թէպէտ և 1912 թուին արտորի, ոմանք նոյնիսկ տաժանակիր աշխատանքի էին դատապարտուած, այնուամենայնիւ այժմ նրանք անհրաժեշտ էին:

Այս պատճառաւ՝ վեհափառ Կաթողիկոսը «ապրիլի 19-ին առանձին գրութեամբ դիմեց Կովկասի Փոխարքայ Նորին Պայծառափայլութեան կոմս Վարանցով-Դաշկովին՝ և միաժամանակ Արզարագատութեան Նախարար Նորին Բարձր Իերազանցութեան Շչեղլովիտովին՝ խընդրելով արկանել առ ոտս Նորին Կայսերական Մեծութեան Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսի ամենայն Հայոց ամենահպատակօրէն միջնորդութիւնը դաշնակցութեան կուսակցութեանը ներելու համար»<sup>1</sup>: Փոխարքան ու «մինիտորը համակրանքով վերաբերուելով» Նորին Օծութեան միջնորդութեանը՝ դաշնակցական գործիչներին հետզհետէ ներման և ազատութեան արժանացնել տուին՝<sup>2</sup>, ոչ միայն դատարանով դատապարտուածներին, այլ նաև դատաստանից փախուստ տուողներին:

Չմոռանամ յիշել, որ ինչպէս դաշնակցական գործիչների ներման ու ազատման, նոյնպէս և Տաճկա-Հայաստանում զրամատների բացման

1) «Արարատ», յունիս, եր. 491.

2) Նոյնը, եր. 492.

համար՝ շատ աշխատեց Պետական Դուռայի անդամ Միքայէլ Պապաճանեանցը, որ ուսանայերի շահերից աւելի՝ ինքնիրեն նուիրեց տաճկահայ դատի պաշտպանութեանը՝ յաճախակի արտաքին և ներքին գործերի մինխտրները հետ տեսակցելով և նրանցից խորհուրդ ու հրահանգ ստանալով:

Ծ.

1914 թ. Յուլիսի 19-20-ին «երբ պատերազմը յայտարարուեց, Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճեց Ռուսահայոց բոլոր թեմակալ առաջնորդներին հրամայել իրենց թեմերի եկեղեցիներում մաղթանք կատարել՝ բարեմաղթելու մեր ընդհանուր հայրենիքի քաջամարտիկ զինուորներին յաղթութիւն ընդդէմ Մեծն Ռուսաստանի յանդուգն թշնամիների <sup>1</sup>:

Ապա օգոստոսի 5-ին Նորին Օծութիւնը մի կոնդակ ցրուեց յանուն «գերապատիւ թեմակալ առաջնորդաց, բարձրապատիւ փոխանորդաց, արժանապատիւ աւագ երիցանց և քահանայից, վսեմափայլ իշխանաց և մեծատանց, աշխատասէր վաճառականաց և արհեստաւորաց, քրտնաջան երկրագործաց, բարեջան հոգաբարձութեանց և ուսուցչաց և ամենայն ազգային հասարակա-

1) «Արարատ» 1914, օգոստոս.

կան գործչաց, հարազատ որդւոց Մայր Աթոռոյ», որոց առաջարկում էր «փութով օժանդակել նիւթապէս և բարոյապէս յաջողութեան համապետական մեծի և արդարացի գործոյն (պատերազմին) և կազմակերպել զմարդասէր գործ եղբայրական օգնութեան վասն անօգնական ընտանեաց նոցա, որք ի պատերազմի պատրաստ են զինել զանձինս իւրեանց վասն պատուոյ և բարօրութեան ընդհանուր հայրենեաց մերոց՝ Մեծագոր Ռուսիոյ»:

Հայրապետական այս կոնդակից առաջ էլ, յետոյ էլ հայ մեծատուն անհատներ, ընկերութիւններ և հիմնարկութիւններ ամենուրեք փութացին իրենց քաղաքացիական պարտքը կատարելու իրանց միանուագ և պարբերական նուիրաբերութիւններով և իրենց տեսակ-տեսակ ձեռնաշակցութիւններով: Մասնաւորապէս «հայ հասարակութիւնք մայրաքաղաքաց Պետրոգրադի և Մոսկուայի, Նոր-Նախիջևանի, Բագուի, Տփլիսեաց և այլ հայաբնակ քաղաքաց, որպէս և Բարեգործական Ընկերութիւն Հայոց Կովկասու, Մարդասիրական Ընկերութիւն և Կուլտուրական Միութիւն Հայոց Բագու քաղաքի և այլ Աստուածահաճոյ ընկերութիւնք, Միութիւնք և Յանձնաժողովք արանց և կանանց՝ ամենայն անկեղծութեամբ և ազնիւ եռանդեամբ ջանան կատարել զբարոյական և զսրբազան պարտիս իւրեանց առ քաջարի և անձնագոհ եղբայրս և առ ընդհանուր Հայրենիս, բանալով գհիւանդանոցս, կազմակեր-

պելրով զգործ առողջապահական խնամոց և եղբայրական օգնութեան» 1:

ԾԱ.

1912 թւականից սկսեալ՝ ուստահայ և ուստի թերթերի յարուցած աղմուկները և նրանց յարաձուն յարձակումները Օսմանեան կառավարութեան վրայ Տաճկա-Հայաստանում իրերէ թե տեղի ունեցող մասնաւոր և գանգուածային կոտորածների առթիւ, հայոց հոգևոր բարձրագոյն իշխանութեան միջամտութիւնն ու մասնակցութիւնը և, ի վերջոյ, պաշտօնական դիմումը ուստի կառավարութեանը տաճկահայերին իր հովանաւորութեան ու պաշտպանութեան տակին առնելու համար, այդ աղմուկների, յարձակումների և միջամտութեան երեսից՝ ուստի դիպլոմատիայի գործ զբաժ ճնշումներն ու պահանջները Բ. Գոնից այն ժամանակ, երբ վերջինիս գլուխը շատ խառն էր թիւրք-իտալական նոր վերջացած պատերազմի հետևանքով և նոր սկսուած ու արծարծուած թիւրք ու Բալկանեան ազգերի կատաղի, ճակատագրական պատերազմով. ի հետևումն Նորին Սծութեան պատուէրի՝ Պօլսոյ հայոց պատրիարքի պահանջները, որ նա անում էր Բ. Գոնից, Ազգային ժողովու. տեղի ունե-

1) «Արարատ» 1914, հոկտ. եր. 871.

ցած անցքերն ու վէճերը, Պօլսոյ ամբօխի կատարած ցոյցերը. վերջապէս 1914 թ. յունուարի 26-ին թիւրքիոյ և Ռուսիոյ մէջ կուած դաշինքը, որով ուստի դիպլոմատիան գալիս էր վերակենդանացնելու 1878 թ. ս. Ստեֆանօյի դաշնագրի 16-րդ յօդուածը, եթէ ոչ բոլորովին, դոնէ կիսով չափ, Տաճկա-Հայաստանի մի մասը իր ազգեցութեանն ենթարկելով, ուստի-գերման պատերազմի առթիւ հայ հոգևորականութեան ու ժողովրդեան արտայայտած ջերմ համակրութիւնը դէպի Ռուսիան և նրան մատուցած նիւթական աջակցութիւնը, —

. . . . .  
. . . . .  
. . . . .  
. . . . .  
. . . . .  
. . . . .

Միւս կողմից՝ Բ. Գոնի համար շատ պարզ էր, որ եթէ երբեակ դաշնակցութիւնը յազթող դուրս գայ ներկայ պատերազմից, Օսմանեան պետութեան երգը երգուած, պրծած կը լինի, — դաշնակիցները նրան իրանց մէջ փայ ու բաժին պիտի անեն անտարակոյս:

Գերմանական ճարպիկ դիպլոմատիան արդէն այն աստիճան և այնքան ազգեցութիւն էր ձեռք բերել Վոսիտրի ու Դարգանելի ափերում, և այն աստիճան իր երկաթեայ ճանկերի մէջ

սեղմել Օսմանեան կառավարութեանը, որ, ինչպէս Ռուսիային, նաժանաւանդ Անգլիային ու Ֆրանսիայի այլևս ոչ մի հաշիւ չկար, կանգուն պահել այդ անուանական կառավարութիւնը: Ընդհակառակը քաղաքական ամենամեծ անհրաժեշտութիւն էր՝ օր առաջ՝ տապալել նրան և դուրս մղել Կ. Պօլսից: Իսկ այդ օրը գալու էր, և այսուհետև էլ գալու է, այն ժամանակ, երբ երբեակ դաշնակցութիւնը ներկայ պատերազմում յաղթող հանդիսանայ:

Վերջապէս երրորդ կողմից՝ Գերմանիան իրեն համար միանգամայն անսպասելի կերպով իտալական զինակցութիւնից զրկուելով՝ կամեցաւ նրան թիւրքիայով փոխարինել՝ խոստանալով նրան ի վարձատրութիւն Կովկասն ու Եգիպտոսը: Եւ թիւրքիան մեծ սիրով ընդունեց գերմանական այդ առաջարկութիւնը, այն պարզ պատճառով, որ իրա համար ուրիշ ելք չէր մընում:

Այսպէս թէ այնպէս, ինչպէս ասացինք, նրա երգը երգուած էր երբեակ դաշնակցութեան յաղթութեան դէպքում, մինչդեռ երբեակ զինակցութեան յաղթութեան դէպքում նա դեռ կարող էր յոյս տածել ոչ միայն իր գոյութիւնը դեռ առ ժամանակ մի ևս պահպանելու, այլ նաև Եւրոպայում կորցրած երկիրներ ի փոխարէն՝ Ասիայում և Աֆրիկայում նոր երկիրներ ձեռք բերելու: Քիչ յետոյ կը տեսնենք, որ հայ

դաշնակցական գործիչները՝ ուսս զիպլոմատիային ձայնակցելով, խորհուրդ չէին տալիս թիւրքերին ներկայ պատերազմի մէջ խառնուելու, անուանելով այն արկածախնդրութիւն: Մինչդեռ այդտեղ ոչ մի արկածախնդրութիւն չկայ, այլ կեանքի և մահու խնդիր էր այդ, և թիւրքիայի համար ուղղակի հաշիւ էր անշուշտ աջակցել երբեակ զինակցութեանը: <sup>1)</sup>:




1) «Հովիտ»-ի խմբագրութիւնը № 20-ում յայտնում է, որ իրանից անկախ պատճառով՝ անկարող է շարունակութիւնը տպագրելու»:

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.



Handwritten text at the bottom of the page, appearing to be bleed-through from the reverse side. The text is mirrored and illegible.



\*\*\*

1. Զէնիաթ—դէնիաթ
2. Գլխագին
4. Ապօրինի դաւակը
3. Գինեղև
5. Ռաֆֆիի „կայծերը“
6. Կացինը քարին կպաւ
7. Մտորումներ
8. Պատմական Քաղաքներ Ա. պրակ.
9. Պատմական Քաղաքներ Բ. »
10. Պատմական Քաղաքներ Գ. »
11. Պատմական Քաղաքներ Դ. »
12. Պատմական Քաղաքներ Ե. »
13. Պատմական Քաղաքներ Զ. »
14. Պատմական Քաղաքներ Է. »
15. Իսրայէլ Օրին և իր քաղաքական ծրագիրը
16. Հայկական հարցի երկրորդ շրջանը
17. Հայկական հարցի երրորդ շրջանը
18. Հայկական հարցի չորրորդ շրջանը
19. Հայկական հարցի հինգերորդ շրջանը
20. Հայկական հարցի վեցերորդ շրջանը
21. Պատմութեան դասերը
22. Հրապարակախօսական մանրունք
23. Պատմական Քաղաքներ Ը. պրակ.
24. Պատմական Քաղաքներ Թ. պրակ
25. Պատմական Քաղաքներ Ժ. պրակ
26. Ռոճիկ քահանաներին
27. Հայկական հարցի եօթներորդ շրջանը. 50 կ.

Ս պ ա ու ւ ա ծ ե ն

« Ազգային գրադարան



NL0198767

